

«ՎԷՄ», համահայկական հանդես, Երևան, 2013, թիվ 1 (41), հունվար-մարտ, էջ 70-116:

ԷԼՋԻՆ ԳՐՈՍՔՐՈՒՍԸ ԵՎ ԻՐ «ԱՐԱՐԱՏ» ՎԵՊԸ

«Եվ ուսերին մի գաճաճ, փոքր Արարատ անունով հայտնի կատար շալակած՝ երկնականարում ճախրում է Արարատի հզոր գագաթն այնքան հստակ, որ մարդկային երևակայությունը լցվում է անպարփակ տարածության սարսուռով, հավերժական ծյունով պճնված կնճռապատ, միայնակ գմբեթ՝ ճերմակ, ինչպես ծերունու գլուխ, իմաստությունից ու կենսափորձից զառամած, ամպի քուլաները լուսապսակի պես ճակատին՝ աստվածային խաղաղության և ըմբռնման լուռ վկա»:

Էլջին Գրոսքրոուս

Էլջին Գրոսքրոուս¹ (1899-1983) 20-րդ դարի ամերիկյան արձակի ինքնատիպ ներկայացուցիչներից է, որի գրական ժառանգության մեջ առանձնանում է «Արարատ» վեպը²: Վերջինս վաղուց արժանացել է հեղինակավոր երեք մրցանակների (American Booksellers Award, 1939, National Book Award, 1939, Foundation for Literature Award, 1940) և իր տեսակի մեջ դարձել երկրորդը մեծ ավստրիացու՝ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպից (1933) հետո:

1920-ական թվականներին մի միջոց աշխատելով Ալեքսանդրապոլի որբանոցում, ուր ապաստանել էին եղեռնապուրծ հայ որբուկներ, երիտասարդ ամերիկացին մի կողմից ականջալուր է դառնում վերջիններիս կրած տառապանքներին ու ահասարսուռ պատմություններին և, ինչպես Մովսես Խորենացին կասեր՝ իր «խնամքի զգեստը» տարածում նրանց վրա, մյուս կողմից՝ ականատես լինում քաղաքական բարդ, ներհակ ու դրամատիկ իրադարձությունների: Անտարակույս, հենց այստեղ է ապագա վիպասանը ձեռք բերում վավերական այն փաստերը, որոնք հետագայում իրենց գեղարվեստական ուրույն ու ազդեցիկ արտահայտությունը պիտի գտնեին նրա գլուխգործոց երկի էջերում:

Էլջին Գրոսքրոուսի առաջին վեպը լույս է տեսել 1937-ին, իսկ վերջինը՝ 1982-ին՝ մի ժամանակաշրջան, որը համընկնում է ամերիկյան գրականության աննախադեպ զարգացման հետ: Ամերիկացի նշանավոր գրողները հենց այդ շրջանում են ստեղծել այն մեծ երկերը, ո-

¹ Գրոսքրոուսի անվան՝ *Էլզին-Էլջին*, հայերեն տառադարձության փոփոխակներից երկուսն էլ ընդունելի են, և մինչ այժմ նպատակահարմար է գտնվել ընդունել առաջինը, սակայն բոլորովին վերջերս գրողի չորս դուստրերից մեկի՝ Հիլդեգարդ Բրենդլըր Գրոսքրոուսի հետ խորհրդակցությունից պարզվեց, որ թերևս ավելի հարագատ է պահպանել անգլերեն հնչողության տարբերակը՝ *Էլջին*:

² Տե՛ս **Գրոսքրոուս Է.**, Արարատ (անգլ. թարգմ.՝ Ս. Թումանյանի), Երևան, «Հայաստան» հրատ., 2005, 432 էջ (Այսուհետև այս հրատարակությունից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն միայն տեղում՝ փակագծի մեջ):

րոնք արտացոլել են անհանգիստ ժամանակների փիլիսոփայական ու մշակութային ուղղությունները՝ նպաստելով ազգային ինքնության և գիտակցության ձևավորմանը: Երկրորդ աշխարհամարտից հետո գրական ասպարեզ իջած երիտասարդ գրողների սերնդի գաղափարախոսության հիմքում ընկած էին 1920-ականների իրապաշտական ավանդույթները, գրողներ, որոնց ստեղծագործությունների հիմնական աղբյուրը էռնեստ Հեմինգուեյի, Ջոն Դոս Պասսոսի, Վիլյամ Ֆոլքների, Թոմաս Վուլֆի, Շերվուդ Անդերսոնի և Ջոն Օ' Հարայի գրական ժառանգությունն էր: Նորերից ամենաավագը՝ Վիլյամ Բերրոուզը, ստեղծագործել էր դեռևս մինչպատերազմյան շրջանում, իսկ ամենաերիտասարդներից մեկը՝ Նորման Քինգսլի Մեյլերը, առաջին գիրքը հրատարակել էր 1948-ին: Ժամանակային առումով իրարից զգալիորեն հեռու գտնվող այս և մյուս գրողները ներկայացնում էին 20-րդ դարի իրապաշտների երկրորդ սերունդը՝ երիտասարդ տարիքից քաջածանոթ լինելով ավագ սերնդի գրողների երկերին: Նրանք փաստորեն սկսել էին այնտեղից, որտեղ ավարտել էին Հեմինգուեյն ու նրա սերունդը: Նորերը տենդագին փնտրտուքների մեջ հայտնաբերում էին որոնվածը՝ արդիականությանը համահունչ լեզվաոճական արտահայտչականություն, որոշակի ենթատեքստ պարունակող հակիրճ և հաճախ հստակ չձևակերպված շարադրանք, ավելորդություններից զերծ պատում, հեղինակային մի տեսակ մեկուսացվածություն, զգացական մեկնաբանության ու զգացմունքայնության ակնհայտ բացակայություն... Վիլյամ Բերրոուզ, Ջեյմս Ջոնս, Ջոն Ափոլայք, Ջոն Ուայլդեր, Թենեսի Ուիլյամս, Արթուր Միլլեր, Վիլյամ Սթայրոն, Ջերոմ Դեյվիդ Սելինջեր, Նորման Մեյլեր՝ ահա ամերիկացի գրողների մի համաստեղություն, որն իր հայտնագործության ամենամեծ արգասիքը՝ էքզիստենցիալիզմը, դարձրեց գրական ճանաչված ու առաջնային հոսանք՝ բավական տարբեր եվրոպականից:

Էլջին Գրոսքլոուսը ևս, շահեկան լիցքեր ստանալով նախորդ շրջանի արդեն դասական համարվող հայրենակիցներից, իր սերնդակիցների հետ մշակում էր գեղագիտական ինքնատիպ հայեցակարգ, որոնում արժեքաբանական նոր համակարգ... Ճիշտ է, նա վերոհիշյալներին անվիճելիորեն զիջում էր գրական վաստակով ու տարերքով, չուներ նրանց բացառիկ կենսազգացողությունն ու կերպավորման բարձր արվեստը, բայց և այնպես անպայման տաղանդավոր մտածող էր, որի ստեղծած գրական արժեքներն այսօր էլ ուշարժան են ու գրավիչ համայն մարդկության և նվիրական՝ հատկապես հայոց համար: Այո՛, հատկապես մեզ համար, քանի որ յուրովի լրացնում են ամերիկացի գրողների՝ Հայոց մեծ եղեռնապատումին նվիրված ազդեցիկ էջերը³: Այդ ամենի պերճախոս վկայություններից է այն, որ «Արարատ» վեպը զարմանալի եռանդով ու արագությամբ մեկ տարվա ընթացքում թարգմանվեց ու հրատարակվեց

³ Այդ տեսակետից հատկապես հիշատակելի են էռնեստ Հեմինգուեյի «Ջոյունիայի ափին» ու «Վիլիմանջարոյի ծյուները» պատմվածքները, Ջոն Դոս Պասսոսի «Արևելյան ձեպընթաց», Արթուր Քոնեսլերի «Անտեսանելի գրությունը» և «Կարոտի դարը», Հենրի Միլլերի «Մարուսիի արձանը» և «Կարմիր խաչելությունը», Էլիյա Կազանի «Ամերիկա, Ամերիկա», ինչպես նաև Վիլյամ Սարոյանի «Հայաստանցի Անդրանիկը», «Հայն ու հայը», «Երիտասարդ քաջ մարդը շարժվող ճոճածողի վրա», «70.000 ասորի» երկերը, Լևոն-Ջավեն Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք», Մայքլ Արլենի «Ուղևորություն դեպի Արարատ», Փիթեր Նաջարյանի «Ուղևորություններ» ու «Հիշողության դուստրերը» և Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սև շունը» վեպերը:

շվեդերեն⁴: Ռա 1940 թվականին էր՝ Համաշխարհային երկրորդ պատերազմի խառնակ օրերին, ու թեև աշխարհն ուներ բազմաթիվ հոգսեր՝ Գրոսբլոուսի վեպը մարդկությանը կարծես նորից նոր հիշեցնում էր Հայոց մեծ եղեռնի սարսափներն ու զգուշացնում հետագա ոճրագործությունների ծանր հետևանքների մասին: «Հայաստան անունը ընդմիշտ կմնա մեր հիշողության մեջ: Այդ անունը դարձել է սարսափների խորհրդանիշ, հիշողություն այնպիսի ոճիրների, որոնց աշխարհը չէր տեսել Քրիստոսի ծննդից ի վեր: Մի երկիր, որը ողողվեց հայ ժողովրդի արյունով»⁵, ժամանակին անկեղծաբար գրել էր համբավավոր «Մանչեստեր գարդիան» պարբերականը, իսկ Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն՝ հայտարարել. «Ես միանգամայն վստահ եմ, որ մարդկության պատմության մեջ երբևէ չի կատարվել նման ոճրագործություն: Անցյալի բարբարոսություններն ու ոճիրներն աննշան են թվում 1915 թվականի ցեղասպանության համեմատությամբ»⁶:

1. Էլջին Գրոսբլոուսի կյանքի ուրվագիծը

Էլջին Գրոսբլոուսը ծնվել է Օքլահոմա նահանգի Վոքոմիս քաղաքում 1899-ի նոյեմբերի 25-ին Քլարենս և Ղելտա (Ուիշարդ) Գրոսբլոուսների ընտանիքում⁷: Լինելով հինգ զավակներից ամենաավագը՝ վաղ տարիքից Էլջինը երազել է գրող դառնալ և 1916-ին ընդունվել է Օքլահոմայի համալսարան, որն ավարտել է 1920-ին՝ սոցիոլոգիայի բակալավրի աստիճանով:

1920-ից մինչև 1922-ը դասավանդել է Պարսկաստանի Թավրիզ քաղաքի պրեսիտերիանական միսիոներական ավագ դպրոցում՝ միաժամանակ ստանձնելով Մերձավոր Արևելքի նպաստամատույց պարսկական կոմիտեի քարտուղարի պաշտոնը: Մինչ Գրոսբլոուսը մանկավարժի խաղաղ կյանքով ապրում էր միսիոներական դպրոցում, Թավրիզում սկսվում է մեծ խռովություն, և մի ամբողջ շաբաթ քաղաքը հայտնվում է պաշարված վիճակում: Հեռավոր

⁴ Տե՛ս **Groseclose E.**, Ararat, Till Svenska av Josef G. Jonsson, Fahlcrantz & Gumaelius, Stockholm, 1940, 509 p.

«Արարատ» վեպի՝ շվեդերենով հրատարակության առիթով ինձ հայտնի է հետևյալ հուզիչ պատմությունը: Հալեպի Հովի. Աբելյան թատրոնի դերասան Սարգիս Ջեյթունցյանը, Ստոկհոլմի Գյոթերորգ գրադարանի քարտադարանում 1970-ականներին տեսնելով «Արարատ» վերնագրով շվեդերեն գիրքը (509 էջ), պատվիրում ու սկսում է անհագորեն կարդալ: Նա ժամանակի սղության պատճառով չի հասցնում ավարտել գիրքը և դիմում է գրադարանի անձնակազմի համար աներևակայելի ու իր բնույթին անհարիր մի արարքի՝ գողանում է գիրքը: Ս. Ջեյթունցյանն այնուհետև երկար ժամանակ փորձում է գտնել վեպի բնագիրը, բայց ապարդյուն: Եվ նա անում է երկրորդ՝ աներևակայելի քայլը. վեպը շվեդերենից թարգմանում է անգլերենի, ապա՝ անգլերենից՝ հայերենի: Նա հայերեն տարբերակը վերածում է հինգ արարվածով պիեսի՝ թատրոնում ներկայացնելու համար: Ինչ-ինչ պատճառներով դա նրան չի հաջողվում: 2005-ին՝ Երևանում «Արարատի» հայերենով լույսընծայումից մի քանի ամիս անց, վեպի շվեդերեն թարգմանությունը Ս. Ջեյթունցյանի անգլերեն և հայերեն տարբերակների հետ միասին վերջինս կնոջ եղբայրը, ում անունը, ցավոք, մոռացել էմ, հանձնել է ինձ ու պատմել «Արարատ» վեպի վերոբերյալ ուղիսականը (Ս. Թումանյան):

⁵ «**Manchester Guardian**», Manchester, 1916, December, p. 4

⁶ **Morgenthau H.**, Ambassador Morgenthau's story, Garden City, New York, 1918, p. 321-322 (Published in Britain as *Secrets of the Bosphorus*).

⁷ Է. Գրոսբլոուսի մասին կենսագրական տվյալները քաղվել են տարբեր աղբյուրներից (տե՛ս **Warfel R. Harry**, «American Novelists of Today», 1951, socialarchive.iath.virginia.edu/xtf/view?...groseclose-elgin-earl-1899): Որոշ մանրամասներն էլ մեզ հաղորդել է գրողի դուստրը՝ Հիլդեգարդ Բրենդլըր Գրոսբլոուսը:

օրերի այդ իրադարձությունները հետագայում իրենց գեղարվեստական ազդեցիկ մարմնավորումը պիտի ստանային նրա «Կարմելիտը» վեպում⁸:

Կոմիտեի հանձնարարությամբ Էլջին Գրոսքլոուսը մեկնում է Հայաստանի Ալեքսանդրապոլ քաղաքը և աշխատում «Մանկական քաղաք» կոչվող որբանոցում, ուր Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամակալության ներքո ապաստանել էին եղեռնից փրկված 25.000-ից ավելի որբ երեխաներ:

Ուսական հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված նորանկախ հանրապետությունները շուտով տապալվում են, և ամենուր ստեղծվում են սովետներ, որոնք զանգվածային բանտարկություններով ու գնդակահարություններով իբր չեզոքացնում էին ցանկացած ընդդիմություն: Նորաստեղծ սովետները հատկապես կասկածանքով էին վերաբերվում բարեխնամ կազմակերպություններին՝ դրանք համարելով ամերիկյան իմպերիալիզմի գործիքներ: Ջանազան բռնություններից հիասթափված՝ Էլջին Գրոսքլոուսը 1921-ին որոշում է վերադառնալ հայրենիք, սակայն տունդարձի ճանապարհին նրան խուզարկում են Բաթումի մաքսատանը և մտը «կասկածելի» փաստաթուղթ՝ կյանքի ապահովագրման վկայական (life insurance policy)⁹ գտնելով՝ ձերբակալում են, մեղադրում լրտեսության մեջ և ուղարկում Հայաստանի չեկայի բանտը: Այսօր արդեն դժվար է կռահել, թե ինչպիսին կլինեի Գրոսքլոուսի ճակատագիրն այնտեղ. արդյոք նա երբևէ դուրս կգա՞ր բանտից... Նրան փրկում է պատահականությունը. մի օր բանտախցի պատուհանից բակում նկատում է մի ամերիկացու և սուլում է ԱՄՆ-ի հիմնը՝ “The Star Spangled Banner”: Այս կերպ Հայաստանում ամերիկյան ներկայացուցիչներին հայտնի է դառնում, որ բանտում Ամերիկայի քաղաքացի է կալանված, և նրանց, ի վերջո, հաջողվում է Գրոսքլոուսին ազատել, ու վերջինս վերադառնում է Վաշինգտոն: Ի դեպ, բանտում անցկացրած սոսկալի ամիսը պատկերավոր արտացոլում է գտել «Արարատ» վեպի «Բանտ» վերտառությամբ գլխում:

Բանտում ձեռք բերած կենսափորձն ակնհայտորեն թուլացրել էր միսիոներական առաքելության կարևորության վերաբերյալ երիտասարդի մարդասիրական պատկերացումները, և նա որոշում է շարունակել իր կիսատ կրթությունը Վաշինգտոնի համալսարանում՝ այս անգամ արդեն տնտեսագիտության բնագավառում: 1924-ին Գրոսքլոուսը հաջողությամբ ավարտում է համալսարանը՝ ստանալով նախ՝ մագիստրոսի, ապա՝ գիտությունների դոկտորի աստիճան (1928): Ապագա վիպասանը, որպես ֆինանսիստ, պետական ծառայության է անցնում առևտրի դեպարտամենտում և մի քանի տարի աշխատում Ուոլ ստրիթում: 1927-ի հունիսի 25-ին ամուսնանում է Վաշինգտոնի հայտնի իրավաբաններից մեկի դստեր՝ Լուիս Վիլյամսի հետ: Ամուսնությունից հետո Գրոսքլոուսները տեղափոխվում են Նյու Յորք, ուր Էլջինն աշխատում է նորաստեղծ «Fortune» ամսագրի ֆինանսական բաժնում՝ որպես խմբագիր, ինչպես նաև բանկային գործ և տնտեսագիտություն է դասավանդում Նյու Յորքի Սիթի քոլեջում: 1928-ին աշխատում է Նյու Յորքի մեծ բանկերից մեկում:

⁸ St. u **Groseclose E.**, The Carmelite; New York; The Macmillan Company; 1955; 289 p.

⁹ Մաքսատանը “policy” («քաղաքականություն») բառը շփոթում են “police”-ի («ուստիկանության») հետ:

1932-ին Գրոսքլոուսների ընտանիքը վերադառնում է հայրենի Օքլահոմա, ուր էլջինը դասավանդում է տեղի համալսարանում: 1934-ին լույս է տեսնում նրա առաջին գիրքը՝ «Դրամ: Մարդկային հակասությունները» (“Money: The Human Conflict”) վերնագրով: Այնուհետև մեկ տարի անց՝ 1935-ին, Գրոսքլոուսը տեղափոխվում է Վաշինգտոն, ուր դաշնային հաղորդակցության միջոցների հանձնաժողովում (Federal Communications Commission) ստանձնում է ֆինանսիստի, ապա հարկային տեսչությունում՝ տնտեսագետի պարտականությունները:

Վաշինգտոնում ապրելու տարիներին Գրոսքլոուսն իրականացնում է գրող դառնալու իր վաղեմի երազանքը: 1937-ին լույս է տեսնում նրա գեղարվեստական առաջին գործը՝ «Պատվելի էլի Ուիշարդի և նրա սպասավոր Ֆաթիի ճամփորդությունը Պարսկաստանով» (“The Persian Journey of the Rev. Ashley Wishard and His Servant Fathi”), իսկ երկու տարի անց՝ «Արարատ» վեպը: Բացի դրանցից՝ նա հրատարակում է նաև վեց վեպեր՝ «Հրեշը» (“The Firedrake”, 1942), «Սալադինի դաշույնը» (“The Scimitar of Saladin”, 1950), «Կարմելիտը» (“The Carmelite”, 1955), «Քայովան» (“The Kiowa”, 1978), «Օլիմպիա» (“Olympia”, 1980) և «Քոմանչների երկիրը» (“The Comanche Country”, 1982), որոնցից մի քանիսը, ցավոք, գեղարվեստի տեսակետից անկատար են և ունեն սովորաբար կողմեր:

1935-ից մինչև կյանքի վերջը էլջին Գրոսքլոուսն իր տիկնոջ հետ հիմնականում ապրել է Վաշինգտոնում: Նրանք ունեցել են չորս դուստրեր: Վաստակած գրողն ու հանրային-քաղաքական կյանքի եռանդուն գործիչը վախճանվել է 1983-ին 84 տարեկան հասակում՝ կաթվածից:

2. «Արարատ» վեպը

1939-ի Ամերիկյան գրավաճառների մրցանակին (American Booksellers Award) արժանացել են երեք վեպեր՝ Ջոն Սթայնբեքի “The Grapes of Wrath” («Ցասման պտուղները»)՝ որպես լավագույն վեպ, էլջին Գրոսքլոուսի «Արարատը»՝ որպես «գրավաճառների հայտնագործություն» և Ղալթոն Թրամբոյի “Johnny Got His Gun” («Ջոնին և իր ատրճանակը»)՝ որպես «ամենահինքնատիպ ստեղծագործություն»: «Արարատը», ինչպես արդեն նշվել է, հեղինակին բերել է ևս երկու մրցանակներ՝ National Book Award (1939) և Foundation for Literature Award (1940):

1939 և 1940 թվականներին ունեցած մեծ հաջողությունից հետո «Արարատը», սակայն, չի շարունակել գրավել այն ուշադրությունը, որը կարելի էր ակնկալել այդքան հեղինակավոր մրցանակների արժանացած երկի համար: Պատճառներից մեկը թերևս պատումի կառուցվածքային բարդությունն է և իրադարձություններին անտեղյակ ու անտարբեր ընթերցողի համար խճճված բովանդակությունը: Որոշ քննադատներ այն անորոշ կերպով համարել են փիլիսոփայական, իսկ Ուորդըն Ֆրենչը՝ «սոցիալական վեպ»¹⁰: Բայց որովհետև այդ բարդ ու ազդեցիկ

¹⁰ St’u **French W.**, The Social Novel at the End of an Era; Southern Illinois University Press, 1966; p. 14

հյուսվածքի թե՛ բովանդակությունը և թե՛ թեման ունեն համամարդկային նշանակություն, իսկ հայոց համար՝ անգնահատելի կարևորություն, վեպի գեղարվեստական արժանիքները վեր հանելու համար անհրաժեշտ է կառուցվածքի մանրակրկիտ վերլուծություն, հատկապես երեք բաղադրիչ մասերի հարաբերակցության՝ բովանդակության, կերպարային համակարգի և բարոյախոսության մեկնություն:

2. 1. Վեպի խորհուրդը

«Արարատ» վեպի բարձրացրած հիմնահարցը խիստ համահունչ էր ժամանակի եվրոպական ու ամերիկյան հասարակությանը հուզող խնդիրներին: Առաջին աշխարհամարտը ոչ միայն նյութական ավերածություններ ու մարդկային զոհեր պատճառեց, այլև հիմնովին շրջեց Երկրորդ համաշխարհային շեմին կանգնած մարդկության մտածողությունը: Գրականության ու արվեստի միջոցով մարդկությանը ծառայող մտավորականների համար առաջին հարթություն մղվեցին գոյաբանական հարցերը. Է. Հեմինգուեյն ու Ս. Ֆիցջերալդն ստեղծեցին «կորուսյալ սերնդի» իրենց պատկերասրահը, Վ. Ֆոլքների Յոքնափաթավայում տեղի ունեցող դեպքերը գեղարվեստական գրականության էջերում հավերժացրին ամերիկյան հարավի պատմությունը՝ հին ազնվականության և հողատիրության անկում ու քայքայում, անցյալի սխալների կրկնություն, վրիժառություն... Այս բոլոր՝ իրարից խիստ տարբեր հեղինակներին միավորում էր մարդկության գալիքի վերաբերյալ մտահոգությունը, որովհետև կարծես հասել էր այն ժամանակը, երբ մարդիկ հնձում էին այն, ինչ ցանել էին:

Էլջին Գրոսքլոուսն «Արարատ» վեպում իր հերթին ակնկալում է իրեն և ժամանակակիցներին հուզող արդիական հարցերի պատասխաններ՝ այն տարբերությամբ, որ այնտեղ ծավալվող գործողությունները տեղի են ունենում Ամերիկյան մայրցամաքի ճիշտ հակառակ կողմում, իսկ բովանդակությունն ընդգրկում է իրական դեպքեր, որոնք առաջին հայացքից քիչ ընդհանրություն ունեն ամբողջ մարդկությանը հուզող հիմնահարցերի հետ: Վեպի նախաբանում հեղինակը նշում է, որ իր նպատակն է պարզել՝ ինչ ուժեր են օգնում անհատին փրկվելու, երբ հասարակության մեջ ստեղծվում է սահմանային այնպիսի իրադրություն, երբ կյանքը խժռում է իր իսկ ստեղծածը, ջուրը բարձրանում է, ինչպես Նոյի օրերում, և հուսալքությունն ու քառսը լցնում են տիեզերքն ու մարդու սիրտը: 19-րդ դարի վերջերին և հաջորդ դարի առաջին քառորդում աշխարհում ստեղծվել էր հենց այդպիսի իրադրություն: Սակայն եթե համաշխարհային գրականության կողմից անվերապահորեն ընդունված, ճանաչված ու փառաբանված գրողներն այդ հարցերի պատասխանները փնտրում էին իրենց հասարակությանը հուզող խնդիրների լուսաբանման մեջ, ապա Գրոսքլոուսն ընտրում է աշխարհի համար «անկարևոր» մի ժողովրդի կյանքի մի փոքր հատվածը՝ մոտավորապես 28 տարի, և վարպետորեն միահյուսելով այն երկրագնդի տարբեր մասերում տեղի ունեցող մեծ ու փոքր իրադարձություններին՝ ստեղծում է մի զարմանահրաշ պատում մարդ արարածի անլուր տառապանքների, անօրինակ մաքառումների ու պայծառ երազների մասին:

Նկարագրելով հայկական համայնքի կոտորածի մի ցնցող տեսարան «կարմիր սուլթանի»՝ Աբդուլ Համիդ Երկրորդի օրոք և այնուհետև պատկերելով եղեռնապարծ հայոց բեկորների հետագա ճակատագիրը Ռուսահայաստանում՝ արձակագիրը հանրությանն է ներկայացնում մարդկության փրկության սեփական փիլիսոփայությունը, որի առանձին տարրեր այնուհետև որոշակի փոփոխություններով գեղարվեստական մարմնավորում են գտել նրա ստեղծած մյուս վեպերում: «Արարատը», սակայն, արժևորվում է այն հանգամանքով, որ մարմնավորում է հեղինակի աշխարհայացքի ու գեղագիտական հայեցակարգի առավել ամբողջական ու ավարտուն արտահայտությունը:

Վեպում առկա են աշխարհաքաղաքական իրադարձությունների վավերական ու գեղարվեստական ինքնօրինակ հարաբերակցություն-ընդելուզումներ, որոնք էպիկական շունչ են հաղորդում հյուսվածքին: Երկը ներկայացնում է մի ամբողջ ժամանակաշրջան՝ հասարակական-քաղաքական ամենատարբեր շերտերով ու շահախնդրություններով, իսկ վիպական գործողությունները ծավալվում են մերթ Արևմտյան Հայաստանում, մերթ Հայաստանի արևելյան հատվածում, մերթ Պարսկաստանում ու Ռուսաստանում, մերթ էլ Ադրբեջանում կամ Վրաստանում: Բացի համայնքի հետ անմիջական կապ ունեցող քաղաքական իրավիճակի պատկերումից՝ հեղինակը նկարագրում է նաև ժամանակաշրջանի մեծ ու փոքր այն բոլոր իրադարձությունները, որոնք առաջին հայացքից, թվում է, կապ չունեն դիպաշարի հետ, սակայն, ի վերջո, որոշակի ազդեցություն են թողնում հայ համայնքի ճակատագրի վրա: Այս հանգամանքը հաշվի առնելով է Ռուրդն Ֆրենչն «Արարատը» վերլուծել որպես «սոցիալական վեպ»՝ այդ եզրն օգտագործելով նեղ իմաստով: «Սոցիալական վեպ» ասելով՝ նա նկատի ունի այնպիսի ստեղծագործություն, որն այնքան է կապված պատմական որևէ երևույթի հետ, որ անհրաժեշտ է պատմական իրադրության մանրամասն իմացություն՝ տվյալ երկը գնահատելու և հասկանալու համար: Ավելին, պատմական իրադրության պատկերման հետ միասին հեղինակն իր նյութն օգտագործում է, որպեսզի բացահայտի կամ բացատրի, թե ինչու են տեղի ունեցել այդ երևույթները¹¹:

Ու. Ֆրենչը գտնում է, որ վեպի՝ Թուրքիայում և Ռուսաստանում 1895-1921 թվականներին ծավալված ողբերգական իրադարձությունների նկարագրությունները հենց այն սոցիալական նախադրյալներն են, որոնք առաջ են բերել համաշխարհային երկու պատերազմները: Ըստ ամերիկացի գրականագետի՝ «Արարատի» հեղինակը գերազանց գիտակցել է, որ թուրքերի կողմից հայերի հալածանքներն ուղղակիորեն համեմատելի են Եվրոպայում ավելի մեծաքանակ ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած քաղաքականությանը: Ու. Ֆրենչը հատկապես գնահատելի է համարում այն փաստը, որ Գրոսբլոուսը տարածաշրջանում կատարվող ողբերգական ու դրամատիկ իրադարձությունները նկարագրում է վիպասանի՝ ոչ թե այստեղից-այնտեղից ձեռք բերած գիտական տվյալների հիման վրա, այլ ներկայացնում է ա-

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 7:

կանատեսի հայացքը, ականատես, որը դիտել և ուսումնասիրել է նրանց, ում նկարագրել է, նույնիսկ տառապել նրանց ծեռքից¹²:

Վեպում նկարագրվում են երևույթների աստիճանական այնպիսի զարգացումներ, որոնք սկզբում հանգեցրին Առաջին աշխարհամարտին, ապա, քանի որ այդ երևույթները ծնող պատճառները չվերացան, նաև՝ Երկրորդին, չնայած այդ պատերազմներն ընդհանրապես հյուսվածքում չեն հիշատակվում կամ նկարագրվում, իսկ վիպական գործողությունները հանգուցալուծվում են մոտավորապես 1921-ին: Այդ առումով վեպում քննարկվող քաղաքական իրավիճակի այլաբանական նշանակությունն այն է, որ հեղինակը, պատկերելով արևմտահայոց կյանքը սուլթան Համիդի օրոք, ապա՝ սոցիալիստական հեղափոխության շեմին կանգնած Ռուսահայաստանում, պատկերում է սոցիալական այն նախադրյալները, որոնք քսաներորդ դարում առաջ բերեցին համաշխարհային երկու արհավիրք: Ու. Ֆրենչը տարօրինակ զուգահեռություն է համարում այն փաստը, որ «Արարատը» լույս է տեսել 1939-ին՝ պատերազմի սկզբից մեկ շաբաթ առաջ, և այդ վեպն անվանում է «Ժամանակակից իմպերիալիզմի խամրափայլ դարաշրջանի լավագույն դամբանականը»¹³:

Պատումը ներկայացնում է մարդու համար կործանարար սահմանային երկու իրադարձություն՝ հայերի առաջին կոտորածները Թուրքիայում և Սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում: Հեղինակը թեև գեղարվեստական մեծ վարպետությամբ նկարագրում է 1895-ի կոտորածի ընդամենը մեկ տեսարան, իսկ եղերական 1915 թվականի մասին ընդհանրապես չի հիշատակում, այնուամենայնիվ մանրամասնորեն ներկայացնում է այն քաղաքականությունը և մարտավարությունը, որը սուլթան Համիդը ժառանգություն էր թողել երիտթուրքերին, ու աշխարհում տիրող քաղաքական և սոցիալական այն նախադրյալները, որոնք թուրքերին հնարավորություն տվեցին իրականացնելու իրենց սարսափելի ծրագիրը: Այնպես որ, էլջին Գրոսբլոուսի «Արարատը» Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպից հետո հայերի կոտորածը նկարագրող երկրորդ ստեղծագործությունն է, որ պատկանում է օտարերկրացի վիպասանի գրչին: Այս տեսակետից հիշատակելի է Վիլյամ Սարոյանի սեղմ, սակայն դիպուկ մի նկատումը՝ արված Լևոն-Ջավեն Սյուրմեյանի «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» (“I ask you, ladies and gentlemen”) վեպի առաջին հրատարակության առաջաբանում. «Լևոն-Ջավեն Սյուրմեյանը պատերազմական տարիների այն հայ երեխաներից է, ովքեր կարողացան մոլորեցնել թշնամուն ու չմեռնել: Այս երեխաների պատմությունն այժմ արդեն հայտնի է բոլորին: Ֆրանց Վերֆելը «Մուսա լեռան քառասուն օրում» ներկայացնում է այդ պատմության մի մասը, իսկ էլջին Գրոսբլոուսն «Արարատում»՝ փոքր-ինչ ավելի ծավալուն հատվածը»¹⁴: Ավելին, ամերիկացի գրողը մի քայլ առաջ է գնում. նա հերոսներից մեկին հասցնում է Բաքու՝ այդ կերպ նկարագրելով նաև հայերի ջարդը Բաքվում ու բացահայտելով պանթյուրքիզմի էությունն ընդհանրապես և ուղղակի կապ տեսնելով թուրքերի ու ադրբեջանցիների՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության միջև:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 147:

¹³ Նույն տեղում, էջ 142:

¹⁴ **Sumellian Z. Levon**, “I ask you, ladies and gentlemen”, E. P. Dutton, 1945, p. 10

ժամանակաշրջանի երկրորդ կարևորագույն իրադարձության՝ ռուսական հեղափոխության, խորհրդային իրականության ու նրա անբաժանելի մաս կազմող դաժան բանտի յուրօրինակ նկարագրությամբ հեղինակն ընդլայնում է իր էպիկական ընդգրկման շրջանակները: Հայտնի գոյատևման գաղտնիքը կապելով ռուսական հեղափոխությունից մագապուրծ Պոլ Ստեփանովիչ Մարկովի փրկության հետ՝ Գրոսբլոուսն առաջարկում է փրկության մեկ ընդհանուր ճանապարհի բոլոր մահկանացուների համար՝ Աստծու կամքի ընդունումը:

Հայ ընթերցողին այս վեպն առաջին հայացքից կարող է տարօրինակ, անգամ անընդունելի թվալ, քանի որ գլխավոր հերոս Ամովս Լայըլը, որի միջոցով Գրոսբլոուսը ներկայացնում է իր փիլիսոփայությունը, միսիոներ է: Նրա նպատակը թուրքերին, իսկ իրականում՝ հայերին ավետարանչականություն քարոզելն է: Արձակագիրը, սակայն, ինչպես արդարացիորեն նկատել է Ու. Ֆրենչը, հրաժարվում է քրիստոնեությունը նույնացնել որևէ եկեղեցու հետ, ոչ էլ այն հակադրում է իսլամին: Ճիշտ հակառակը. նա պատկերում է ամբողջ մարդկության համար ընդհանուր մեկ Աստծու և մարդու փոխհարաբերություններն ու այն ուղին, որով մարդը կարող է գնալ դեպի Աստված: Ու. Ֆրենչը նկատում է, որ Գրոսբլոուսի գեղարվեստական քարոզչությունը ոչ թե փառաբանում է որևէ կրոնի գաղափարները, այլ այն, որ քրիստոնեությունն առաջարկում է խաղաղության և փրկության ճանապարհ¹⁵:

Հերոսների բնակության վայրերի անվանման հարցում գրողը դրսևորել է ստեղծագործական ազատ մոտեցում, որը բնավ չի նսեմացնում վեպի գեղարվեստական նշանակությունը: Այսպես, վիպական գործողություններն սկսվում են ծավալվել Թուրքիայի՝ խաղողի չքնաղ այգիներով բոլորված Դիլիջան քաղաքում: Կոտորածից հետո հայերը շարժվում են դեպի հյուսիս, անցնում Արաքս գետն ու հայտնվում Կարս քաղաքից քիչ հեռու գտնվող Բարձան կոչվող դաշտավայրում՝ փռված բիբլիական լեռան դիմաց, որտեղից Մեծ ու Փոքր Մասիսները երևում են համարյա այնպես, ինչպես Արարատյան դաշտավայրից. մի բան, որն անհնար է:

Վիպական Դիլիջանն էլ ոչ մի կերպ չի կարելի նույնացնել ժամանակակից Դիլիջանի հետ: Այն հայկական հավաքական քաղաք է, որին հեղինակը վերագրել է պատմական այնպիսի տեղեկություններ, որոնք ցանկացել է հաղորդել ամերիկացի ընթերցողին: Բացի այդ՝ Դիլիջանի՝ իբրև պայմանական տարածք լինելու փաստը պայմանավորված է նրանով, որ ամերիկացի գրողը հեշտացրել է իր գործը. անհրաժեշտություն չկար այլևս նկարագրելու Հայաստանի տարածքը ամբողջությամբ. հեղինակային ասելիքն արդեն կարող էր կենտրոնանալ պատմական իրադարձությունների արտացոլման, այլ ոչ հայկական բնանկարների մանրամասների նկարագրության վրա:

«Արարատում» նկարագրված Կարսի որբանոցն ու զորանոցն իրականում գտնվել են Ալեքսանդրապոլ քաղաքում, որտեղ գրողը մի քանի ամիս աշխատել է: Մեզ թվում է՝ հեղինակը վիպական եզրափակիչ գործողությունների վայրն անվանել է Կարս զուտ այն պարզ պատճառով, որ Ալեքսանդրապոլ անունը խիստ երկար է, իսկ անգլերենում՝ նաև անբարեհունչ: Ջանց առնելով այս անձտություններն ու պայմանական տեղանունները՝ հայկական իրականության

¹⁵ Տե՛ս **French W.**, The Social Novel at the End of an Era; Southern Illinois University Press, 1966; p. 155

նկարագրությունն աչքի է ընկնում զարմանալի տիպականությամբ և հեղինակի խորքային գիտելիքների հարստությամբ: Հակված ենք ենթադրելու, որ Դիլիջանի ընտրությունը նույնպես պատահական չէ. Դիլիջան տեղանունը համաբանական դաշտ է ստեղծում “diligent” բառի հետ, որը մատնանշում է նախ՝ տքնաջան, կատարող (մարդկանց մասին), ապա՝ ձգտող, համառ, անդուլ (գործողությունների մասին): Ինչպես նկատում ենք, քաղաքի անվան «շեղումը» ինքնին անգլիախոս ընթերցողի համար բերում է իմաստաբանական որոշակի ծանրաբեռնվածություն, մինչդեռ հայ ընթերցողի գիտակցության մեջ Դիլիջանը «բացվում» է համաբանական ամբողջովին այլ շղթայի մեջ (կանաչ քաղաք, գեղատեսիլ վայր, այգի-քաղաք, կանաչ Հայաստան և այլն):

Վեպի գեղարվեստական առանձնահատկություններից մեկն այն է, որ հեղինակը կարծես չի շտապում գործողությունները հասցնել ավարտին կամ ինչ-որ որոշակի կետի: Գրականագիտության մեջ «գազաթնակետ» անվանվող հասկացությունը նա կիրառում է յուրահատուկ ձևով. վեպն ունի ընդհանուր գազաթնակետ, և դա աշխարհում ստեղծված սահմանային իրադրությունն է, որը ներկայացվում է նախաբանում: Այդ իրադրությունն ազդեցություն է թողնում առանձին մարդկանց ճակատագրերի վրա, և առանձին անհատների կյանքում առաջանում են գազաթնակետեր, որոնք հեղինակը պատկերում է որպես ընդհանուր բովանդակության հետ իմաստասիրական ընդհանրություններ ունեցող գրեթե առանձին պատմություններ: Այսպես, մասնավոր գազաթնակետ է ստեղծվում Մարիամ Վերյանի կյանքում, որին կոտորածից փրկում է մեծահարուստ Մուրադ բեյը և նրան օթևան տրամադրում իր հարեմում: Գրոսբլոուսը լիովին օգտագործում է ընձեռված հնարավորությունը և նկարագրում արևմտյան քաղաքակրթության համար խիստ օտար, բայց հրապուրիչ այս երևույթը՝ հանգամանալի մանրամասներով (70-79): Հատկանշական է, որ այս հատվածում հեղինակը «մոռանում» է ակնարկել որևէ բացասական կողմ, ինչին հաճախ անդրադառնում է ավելի ուշ լույս տեսած «Կարմելիտը» վեպում և անխնա քննադատում «Ծանոթություն Իրանին» ստեղծագործության մեջ՝ այն համարելով հասարակության առանջընթացն արգելակող երևույթ: Առաջին անգամ անդրադառնալով խոր արմատներ ունեցող մահմեդական այդ ավանդույթին՝ Մուրադ բեյի բազմանդամ հարեմը ներկայացվում է որպես բարոյապես ու տնտեսապես առողջ և կատարյալ մարմին: Իզուր չէ, որ գրաքննադատ Հարրի Հանսենն իր «Արարատ» հոդվածում մարդկային առաքինի հարաբերություններ նկարագրող բազմաթիվ հատվածներից առանձնացրել է հենց դա՝ իբրև «բարության և կարեկցության ոգին» գեղարվեստական մեծ վարպետությամբ վերարտադրող տեսարան¹⁶:

Վիպասանը «Գնդապետ Մարկով» և «Քարիմ աղա» գլուխներում շարունակում է ներմուծել նոր դիպաշարեր ու մարդկային ճակատագրեր, և էպիզոդիկ կերպարների հետ կատարվող իրադարձություններն աստիճանաբար զարգանում են, հասնում գազաթնակետի և ապա հանգուցալուծվում՝ հեղինակի աշխարհայացքային սկզբունքներին համապատասխան:

¹⁶ Տե՛ս The Pittsburg Press – August 30, 1939 page 35. http://news.google.com/newspapers?nid=1144&dat=19390830&id=E_UaAAAAIBAJ&sjid=SkwEAAAAIBAJ&pg=1381,4844052

2. 2. Կերպարային համակարգը

«Արարատն» ունի կերպարային բավական բարդ համակարգ. տարբեր ազգերի ու հասարակությունների ներկայացուցիչներ (հայեր, ամերիկացիներ ու ռուսներ), որոնք հետապնդում են զանազան նպատակներ, ամենատարբեր ճանապարհներով ի վերջո շփվում են վեպի գլխավոր կերպարի՝ Արարատ լեռան, ուրիշ խոսքով՝ աստվածային խորհրդի հետ: Եվ նրանք հասնում են Արարատին: Հեղինակը գեղարվեստական բարձր վարպետությամբ է պատկերում այն ուղիները, որով իր հերոսներն անցնում են աստվածային խորհրդի հետ դեմառդեմ հանդիպելու ճանապարհին, իսկ վեպում Արարատի էությունն ու դերն այնքան է նշանավորվում ու վսեմացվում, որ պատումը ձեռք է բերում փիլիսոփայական և ռոմանտիկ ուրույն երանգներ:

Միակ կերպարը, որը վիպական գործողությունների սկզբից հասնում է մինչև վերջ, ամերիկացի միսիոներ Ամովս Լայռլն է: Հենց նրա միջոցով է Գրոսբլոուսը ներկայացնում մարդկության փրկության իր տեսակետը: Իսկ Պավել Մարկովն այն վերափոխվող հերոսն է, որն անցնում է սահմանային իրադրությունների միջով, մաքրում իր հոգին «ես»-ի կաշկանդից իշխանությունից ու ենթարկվում աստվածային կամքին: Վեպում պատկերված բազմաթիվ հայերի կերպարներն էլ բացահայտում են տվյալ ժամանակաշրջանի հայկական իրականությունը:

Նախաբանում հեղինակն ընթերցողին զգուշացնում է, որ իրեն մտահոգող գլխավոր հարցը ոչ միայն հայերի, այլև ընդհանրապես ֆիզիկական բնաջնջման եզրին կանգնած ազգերի և, հետևապես, անհատների գոյատևման առեղծվածը բացահայտելն է, քանի որ ազգը կազմված է անհատներից: Ի՞նչն է պատճառը, որ որոշ ազգեր վերապրում են պատմության դժնդակ քառուղիներում, ուրիշներն էլ՝ անհետանում: Մարդկությունը բազմիցս վկա է եղել այնպիսի ժամանակների, երբ ամենուր միայն մահ է տիրել ու ավեր, երբ խաղաղությունը և հոգեկան անդորրը երես են թեքել մարդուց՝ նրան դարձնելով կյանքը խժռող ահարկու գազան կամ խժռվող զոհ: Չարն ու բարին խառնվել են իրար և հոշոտել ու հոշոտվել՝ Երկիր մոլորակը վերածելով սպանդանոցի: Արհավիրքի ալիքներն ուռճացել են ու պարուրել մարդուն, ինչպես ջրհեղեղի ջրերը: Եվ նման պահեր եղել են, լինում են և դեռ կլինեն ժողովուրդների կյանքում՝ որոշ ազգերի հավերժ հեռացնելով պատմության թատերաբեմից, ուրիշների գոյությունն էլ անժամկետ երկարաձգելով: Սակայն ինչո՞ւ են որոշ ազգեր վերանում, իսկ որոշ ազգեր վերապրում: Ինչպե՞ս կարողացավ վերապրել հայ ժողովուրդը: Ինչպե՞ս են վերապրել հրեաները, այնու ժողովուրդը, փարսիսների կամ նեստորականների համայնքները: Պատահականությո՞ւնն է պատճառը, հարմարվողականության ընդունակությո՞ւնը, թե՞ բիրտ ուժը:

Իսկապես, նման հարց կարող էր առաջադրել արդեն մի համաշխարհային պատերազմ ապրած և երկրորդի շեմին կանգնած մարդասեր գրողը: Եվ ուշարժանն այն է, որ նա այդ հարցին սեփական պատասխանն առաջարկելու համար դիմում է հենց հայ ժողովրդի պատմությանը, որովհետև «հայը հին ցեղ է, նրա աչքի առաջ ազգեր են ծնվել ու մահացել, թագավորներ են ելել գահին ու ընկել, և վահանին հետևել է վարուցանքը» (10):

Թուրքական կոտորածներից հայկական մի համայնքի մնացորդների և սոցիալիստական հեղափոխությունից Պավել Մարկովի փրկության ամբողջ ընթացքը նկարագրելով ու հյուսվածքի վերջում այդ երկու՝ միմյանցից շատ տարբեր ճակատագրերն իրար միացնելով՝ Գրոսբլուսը փաստորեն ձգտում է պատասխանել այդ էական հարցին: Եվ վեպի դիպաշարի՝ ուղիղ գծով չզարգանալու պատճառը, անտարակույս, հենց դա է: Վիպական հյուսվածքը շարունակ ընդհատվում է, ներմուծվում են նորանոր դիպաշարեր, որոնք առաջին հայացքից կարծես խաթարում են կառույցի ամբողջականությունը, բայց երբ աշխարհի տարբեր ծագերի ներկայացուցիչները՝ հայերը, Մարկովը և Լայըը, Աստվածային կամքը խորհրդանշող Արարատի վրա ի վերջո գտնում են իրենց և իրենց ապավինած հայերի փրկությունը, հեղինակի մտադրությունը դառնում է միանգամայն պարզ, իսկ վեպի բովանդակությունը՝ կուռ և հասկանալի:

Էլջին Գրոսբլուսն աներկբայորեն հավատում է, որ իր նկարագրած ոճիրները հնարավոր դարձան Եվրոպայում ստեղծված համընդհանուր բարոյահոգեբանական և քաղաքական մթնոլորտի պատճառով: Նա գտնում է, որ 19-րդ դարի փիլիսոփայական տարբեր ուղղությունների ազդեցության հետևանքով կրոնի ու բարոյականության էության և նշանակության նկատմամբ եվրոպական հասարակության մեջ խոր արմատներ ձգած նիհիլիստական համոզմունքները չարիք են սերմանում մարդու հոգեբանության ու գործունեության մեջ: Եվ ահա հեղինակը գեղարվեստական գրականության ընձեռած բազմաթիվ միջոցներ է օգտագործում, որպեսզի իր տեսակետը հասցնի ընթերցողին:

Դիլիջանի ռազմական կայազորի հրամանատար Հաշիմ Ֆարուքի կերպարի միջոցով գրողը ներկայացնում է ցեղասպանության կազմակերպիչների հիմնական շարժառիթները և արևմտյան այն գաղափարախոսությունը, որը թուրքերին ազատություն տվեց իրականացնելու իրենց վաղեմի մտադրությունը: Հաշիմ Ֆարուքը, որի նկատմամբ վիպասանն անթաքույց բացասական վերաբերմունք ունի, ստացել է այն նույն կրթությունը, ինչ ժամանակի ունևոր խավի ներկայացուցիչները բոլոր երկրներում: Ղա արտացոլվում է նրա ձեռք բերած աշխարհայացքի սատիրական պատկերմամբ: Ռազմական կայազորի ապագա հրամանատարը Արևմուտքի լավագույն համալսարաններում դասախոսություններ էր լսել Ղեկարտի, Լայբնիցի, Հեգելի, Սպինոզայի, Հոբսի և մյուսների տեսությունների մասին, այն լուսավոր մարդկանց, որոնք «մարդկությանը ճիշտ ուղի էին ցույց տալիս Աստծու, մարդու և բարոյականության հետ առնչվող հարցերում: Նա չէր ըմբռնել այն ամենը, ինչ նրան պատմել էին նրանց փիլիսոփայության մասին, բայց որսացել էր որոշ արտահայտություններ և գաղափարների փշուրներ, որոնք նրա վրա մեծ տպավորություն էին թողել և նրա երևակայության համար մեծ հեռանկարներ բացել» (63): Հաշիմ Ֆարուքի գլխում մեխվել էր այն «օգտակար» տեղեկությունը, որ եվրոպացի փիլիսոփաները համաձայնության չէին գալիս ոչ միայն Մուհամմեդ մարգարեի, այլև իրենց Քրիստոսի կրոնի հետ. «Հավատալ, որ Աստված մարմին է դարձել, նույնքան անհեթեթ է, որքան հավատալ, թե շրջանագիծը կարելի է վերածել եռանկյունների և քառակուսիների: Աստծու և մարդու միջև նույնքան փոքր կապ կա, որքան Շան համաստեղության և կենդանի հաչող

շան միջև» (64): Շոպենհաուերից և Նիցշեից սովորել էր, որ «տիեզերքը կառավարող մեխանիզմում գուր չկար, քնքշություն չկար, խիղճ չկար, սեր չկար: Այն գործում էր ըստ օրենքի, տրամաբանության և ուժի՝ գեղեցիկ, արտառոց կամ էլ սարսափելի ձևերով, ինչպես մարդ դա ընդունի, և մարդկային հույսերի, ցանկությունների կամ երկյուղների նկատմամբ նույն արհամարհանքն էր տածում, ինչպիսին՝ երկաթգծով անցնող շոգեքարշը» (64):

Հաշիմ Ֆարուք բեյը, ինչպես և իշխանություն ունեցող ցանկացած միջին ինտելեկտի տեր անհատ, այդ փիլիսոփայություններից մտապահած փշրանքներն աղավաղել էր՝ դրանք հարմարեցնելով ազգայնական իր նպատակներին: Նույնպիսի աղավաղող պրիզմայով էին այդ գաղափարները, սակայն, անցնում նաև եվրոպական առաջադեմ երկրների առաջնորդների մտահորիզոնով և այնուհետև պայմանավորում նրանց հասարակական գործունեությունը: Այնպես որ, այդ գաղափարները, եթե նույնիսկ ի սկզբանե մարդակործան միտումներ չէին ունեցել, ձևախեղվել էին այնպես, որ, ըստ վիպասանի, դարձել էին հավասարապես վտանգավոր բոլորի համար:

Եվրոպական փիլիսոփայական մտքի աղճատված սկզբունքները դավանանք դարձրած լինելով հանդերձ՝ Հաշիմ Ֆարուքն իր երկրի ճակատագրի վերաբերյալ ուներ միանգամայն այլ պատկերացում: Թե ինչպես պիտի տիեզերքը կառավարող մեխանիզմն իր հայրենիքի համար ուրիշ ճակատագիր կտկտացներ, նա չէր փորձում բացատրել կամ հասկանալ, բայց դրա պատճառը նույնպես եվրոպացի փիլիսոփաներն էին, որոնց առաջադրած նոր գաղափարներն ազգայնամոլություն էին սերմանում. «Ամբողջ Եվրոպան բորբոքված էր իրենց ձգտումները իրականացնել փորձող ցեղերի և ժողովուրդների մշակույթների ազգայնամոլությամբ: Գերմանիայում տասնյակ տարբեր գերմանական ցեղեր մի ազգ էին դարձել: Իտալական թերակղզում նույնիսկ ավելի տարբեր և հակադիր ցեղեր՝ շիկահեր լոմբարդացիներից մինչև թխամաշկ ասիական սիցիլիացիները, մահակի օգնությամբ ընդհանուր ազգ էին կազմել: Այս տարասեռ ազգերը, որ բարձրաձայն հայտարարում էին իրենց «ազգային» ճակատագիրը, միևնույն ժամանակ հրահրում էին այլ ազգերի բաժանումն ու ցրումը, ազգեր, որոնք դարեր շարունակ կողք կողքի էին ապրել» (127): Նույնպիսի լարված իրավիճակ էր տիրում Բրիտանական կղզիներում, Ֆրանսիայում և Ռուսաստանում: Աշխարհը դարձել էր փառասիրության, իշխանության ու հարստության տենդով բռնված մի թատերաբեմ, ուր կոխկռտվում էին քրիստոնեության՝ դարեր շարունակ քարոզած սիրո և բարության մասին մարդասիրական բոլոր սկզբունքները:

Հաշիմ Ֆարուքի ձեռք բերած արևմտյան գիտելիքների նկարագրման միջոցով պատկերելով եվրոպական մտավորականությանն ընդհանուր առմամբ բնորոշ աշխարհայացքը՝ արձակագիրն այնուհետև դիպաշարային զարգացումը տանում է այնպես, որ շարունակ ստեղծվում են առիթներ ամբողջ տարածաշրջանի քաղաքական իրավիճակը բավականին ընդգրկուն ձևով ներկայացնելու համար: Այսպես, 1896-ին, երբ Դիլիջանի կոտորածից փրկված հայկական համայնքի մնացորդները հասնում են Արևելյան Հայաստան ու բնակություն հաստատում Կարսից ոչ հեռու գտնվող Բարձանի դաշտավայրում, իրենց կամքից անկախ

հայտնվում են մեծ քաղաքականության կենտրոնում, որովհետև Կարսը ռուսական կայսրության ռազմական գլխավոր հենակետն էր Կովկասում: «Բարձանի հարթավայրը» գլխում հեղինակը ներկայացնում է ռուս-թուրքական սրված հարաբերությունների ընդհանուր բնութագիրը՝ շեշտելով այն իրողությունը, որ «ռուսական կայսրության կովկասյան նահանգներում մահմեդական փոքրամասնություններ կային՝ թաթարներ, կիրգիզներ, մինգրելներ, ինչպես նաև քրիստոնյա ազգեր, հատկապես՝ վրացիներ, որոնք երբեք ցարին կամակատար հպատակներ չէին եղել, և այս ժողովուրդները գոհունակությամբ էին նայում հզոր Թուրքիայի վրա» (79):

«Արարատ» վեպում ողբերգական երկրորդ իրադրության՝ Սոցիալիստական հեղափոխության բուն նկարագրությունից առաջ Գրոսբլոուսն ընդհանուր գծերով պատկերում է ռուսական կայսրությունում ստեղծված պայթուցավտանգ իրավիճակը, մասնավորապես՝ 1905-ին հայերի դեմ կատարված վայրագությունները Բաքվում: Հեղինակն արդարացիորեն ակնարկում է, որ որոշ մոլեռանդ թաթար մոլլաներ, շահարկելով հայերի տնտեսական դիրքը, սոցիալական անարդարություններից ժողովրդի դժգոհությունն օգտագործում էին հայերի դեմ խռովություններ հրահրելու համար. «Ադրբեջանի բնակիչները (Բաքուն այդ նահանգի մայրաքաղաքն էր) թաթարներ էին, որոնք այս հողը զբաղեցնում էին երևի յոթ հարյուր տարի: Այստեղ նրանք հաստատվել էին Կենտրոնական Ասիայից մեծ գաղթի ժամանակ՝ Թամերլանի և Չինգիզ խանի օրերում: Ավանդաբար նրանք անասնապահ քոչվոր ցեղեր էին, բայց տարածքի արդյունաբերականացման հետ մեկտեղ տնտեսական ճնշման հետևանքով կամաց-կամաց ստիպված էին օրավարձու բանվոր դառնալ՝ բեռնակիրներ, մանր արհեստավորներ և նավթահանքի աշխատողներ: Եվ որքան նրանք ավելի էին իջնում կյանքի հատակը, այնքան բարձրանում էր նոր բուրժուազիան՝ նավթահորերի բարգավաճումից հրապուրված առևտրականներ, կառավարիչներ, հաշվապահներ, ռեստորանատերեր և այլ շահագործողներ: Նորելուկ բուրժուաների հիմնական մասը հայեր էին, ովքեր, ինչպես հրեաները Եվրոպայում, երկար տարիների ճնշման հետևանքով բնակչության անկայուն մասն էին կազմում» (127):

1905-ին հաջորդած խաղաղ տարիների ընդհանուր պատկերը ներկայացվում է իշխան Չերնիլովի՝ Սանկտ Պետերբուրգի իր պալատում կազմակերպած ճոխ ճաշկերույթի նկարագրությամբ: Այդ տեսարանը գեղարվեստական ամբողջականությամբ բնորոշում է ռուսական ազնվականության կենսակերպը 20-րդ դարասկզբին: Բարձրաստիճան ազնվականների հետաքրքրություններն ու մտահոգությունները ևս կրում էին եվրոպական բուրժուական «առաջավոր» գաղափարների ազդեցությունը: Ռուս ազնվականության բարոյական պատկերացումները շատ չէին տարբերվում թուրք հրամանատարի գաղափարներից. նրանք ընդամենը հնչում էին ավելի բարեկիրթ տոնով ու ավելի նրբաձաշակ մթնոլորտում. «Կարեկցության, խղճահարության, խղճի խայթի, զղջման, ափսոսանքի նման բաներից պիտի խուսափել, ինչպես ժանտախտից: Նրանք ո՛չ ուժ ունեն, ո՛չ իշխանություն: Նրանք բացասական են, ոչ մի դրական բան չկա դրանց մեջ, իսկ մենք պիտի փնտրենք դրականը: Մենք պիտի հասկանանք, Պավել, որ ամբողջ աշխարհում միայն մի ուժ կա՝ կամքի անխորտակելի և անսանձելի ուժը: Այն ամենը, ինչ մարդ տեսնում է, ամենը, ինչ նա ստեղծել է, ուղեղի արդյունքն է, որն աշխա-

տում է կամքի միջոցով: Պա միակ օրենքն է, միակ Աստվածը: Մենք պրոմեթևսներ ենք, որ տիրում են սրբազան կրակին, որը ժամանակին վառվել է Օլիմպոսում, բայց ինչ աստվածներն իջել են դժոխք, այնտեղ մոխիր է, և միայն մենք ենք վերապրել այդ կրակի միջոցով» (168):

Աշխարհընկալման ժամանակակից այս տեսակետին հեղինակը հակադրում է քրիստոնեական քաղաքակրթության քարոզած սկզբունքները: Սակայն դա արվում է ոչ թե դավանաբանական չոր կաղապարներով, այլ գեղարվեստական մեծ վարպետությամբ՝ Չերնիլովի ցուփ, բայց սին խնջույքին հակադրելով այդ նույն ժամանակ Ալեքսանդր Նևսկի վանքում մատուցվող Ծննդյան փառահեղ պատարագը՝ բոլոր մանրամասներով:

Առաջին համաշխարհային պատերազմը և Սոցիալիստական հեղափոխությունը հեղինակը համարում է մարդկային կամքի գործունեության ուղղակի հետևանք: «Թիֆլիս» գլխում նա համառոտ, բայց ընդգրկուն ներկայացնում է համաշխարհային պատերազմի, այնուհետև հեղափոխության հետևանքով բռնաձևված Եվրոպայի ու ցարական կայսրության ընդհանուր իրավիճակը: Այդ արհավիրքների ամենակործանարար ազդեցությունը, հեղինակի կարծիքով, մարդկանց հոգեկան աշխարհն էր կրել: Սրընթաց կարմրող Ռուսաստանից փախչող իր հերոսի՝ Պավել /Պոլ/ Մարկովի ողիսականը նկարագրելու միջոցով վիպասանը պատկերում է նաև տարածաշրջանի կաթվածահար դրությունը ռուսական հեղափոխությունից անմիջապես հետո, երբ արևմտյան տերությունները խոստումներ էին շռայլում անդրկովկասյան հանրապետությունների ղեկավարներին:

2. 3. Եղեռնի նկարագրությունը

Վիպական գործողություններն սկսվում են Թուրքիայի Դիլիջան քաղաքում 1895-ի նոյեմբերի 28-ին տեղի ունեցած կոտորածի, դրան հաջորդած թալանի և կենդանի մնացած հայերի հոգեվիճակի նկարագրությամբ: Թուրքերի իրագործած հանցագործության այս մեկ տեսարանի պատկերումով Գրոսբլոուսը մեծ վարպետությամբ ներկայացնում է 1895-1922 թվականներն ընկած ժամանակահատվածում հայկական հարցը լուծելու թուրքերի քաղաքականության գեղարվեստական իր տարբերակը: Արձակագրի խորին համոզմամբ՝ այդ ոճիոր հնարավոր դարձավ իրականացնել պատմական տվյալ ժամանակահատվածին բնորոշ աշխարհաքաղաքական ընդհանուր իրավիճակի պատճառով: Հեղինակը ստվարածավալ հյուսվածքում փորձում է ընթերցողի և պատմության համար բացահայտել այն համընդհանուր շարժառիթները, որոնք մարդ արարածին հասցնում են բարոյական այնպիսի անկման, որ նա հոշոտում է իր նմանին, ինչպես անսիրտ անասուն: Եվ Գրոսբլոուսը վեպի վերջին էջերում առաջարկում է փրկության իր տեսակետը: Հայերի կոտորածը նկարագրող տեսարանի մասին Ու. Ֆրենչն իրավացիորեն գրում է, որ Գրոսբլոուսը չի ենթարկվում բռնության արյունոտ պատմության զգայացունց դրվագներն օգտագործելու գայթակղությանը. նա բացահայտում է այն շարժառիթները, որոնք կարող են մարդուն դարձնել հրեշ¹⁷:

¹⁷ St'u **French W.**, The Social Novel at the End of an Era; Southern Illinois University Press, 1966; p. 150

Վեպի տարբեր տեսարաններում Հաշիմ Ֆարուք բեյի՝ տարբեր առիթներով հնչող կրքոտ «ելույթները» բացահայտում են կոտորածների պատճառները: Նախ՝ նա մեղադրում է արևմտյան տերություններին այն բանում, որ սրանք Աբդուլ Համիդի գահ բարձրանալուց ի վեր փորձում են «զժտության սերմեր ցանել նրա պարտեզում, նրա կայսրության ժողովուրդների մեջ ատելություն և թշնամություն սերմանել» (29): Ֆարուքը նկատի ունի արևմտյան դեսպանությունների միջամտությունը հայկական հարցին և այն դեմոկրատական գաղափարները, որոնք թափանցել էին «քնափությամբ» տառապող հայ իրականության մեջ՝ Արևմուտքում ծնված ազատության մասին նոր հույսերի թարմաշունչ զեփյուռներից: Սակայն դա միակ պատճառը չէ: Թուրք հրամանատարի համար հատկապես արգահատելի է այն, որ հայերը թուրքերին գերազանցում են ամեն ինչում. «Նրանք գերազանցում են իրենց շրջապատին, իրենց կառավարությանը: ...Սակայն, իմ կարծիքով, ավելի լուրջ պատճառն այն է, որ հայերը թուրանական ժողովուրդներին սեպի պես բաժանում են: Մի օր բոլոր թուրանական ազգերը միանալու են, ինչպես բոլոր ռուսները կամ բոլոր ամերիկացիները, միավորվելու են մի խալիֆի ներքո, կենտրոնական Ասիայի տափաստաններից մինչև Բոսֆոր: Ահա այդ ժամանակ մենք կունենանք պանիսլամիզմ: Բայց դրա համար այդ ազգը պետք է վերանա, որովհետև գտնվում է Թուրքիայի և Ադրբեջանի միջև» (133):

Այսպիսով, Գրոսբլոուսը նշում է ցեղասպանության երեք հիմնական պատճառ, որի հետ պատմաբանները կարող են համաձայնել կամ ոչ, իսկ Հաշիմ Ֆարուքի կերպարում ընդհանրացնում է ոչ միայն թուրք ազգայնականների աշխարհայացքը. և՛ ռուս ազնվականության ներկայացուցիչները, և՛ աշխարհը վերափոխել խոստացող պրոլետարները նույն հայացքներով էին առաջնորդվում:

Հաշիմ Ֆարուքը միշտ գտնվում է այնտեղ, որտեղ տեղի են ունենում հայերի զանգվածային ջարդեր: Վեպում պատկերված կոտորածներից երկուսը նա ղեկավարում է անձամբ, իսկ երրորդը, որը տեղի է ունենում Բաքվում, դիտում և մեկնաբանում է որպես պատահական ակնատես: Նա «իր ցեղին սովոր ամբարտավանությամբ» վստահ է, որ Թուրքիան թուրքերի համար է, որ հայերը սպառնում են իր հայրենիքի անկախությանը, և, հետևապես, պետք է նրանցից ազատվել: Մարդասիրական բոլոր ավանդույթները մոլորություններ են. «Մարդկության նկատմամբ հարգանքը լոկ ծաղրի արժանի զգացում է, խղճահարությունը՝ անձնական թուլություն, որին ուժեղ մարդը երբեք չպիտի ենթարկվի» (65): Ֆարուքի այս համոզմունքները, գրողի խորին համոզմամբ, հենց այն մոտեցումներն են, որոնք մարդու հոգին և ուղեղը մթագնում են ու նրան մղում սոսկալի ոճիրների:

Գրոսբլոուսի նկարագրած սպանդի տեսարանն աչքի է ընկնում փիլիսոփայական, բայց ոչ երբեք զգայացունց տիպականությամբ: Դրան անմիջապես նախորդում է Էմանուել և Մարիամ Վերյանների նորաստեղծ ընտանիքի առօրյա երջանկության քնարական նկարագրությունը, որը ներկայացնում է բարոյական այն արժեքները, որոնք հայ մարդու /և հեղինակի/ համար կազմում են կյանքի իմաստը: Վերյանների հովվերգական հարաբերությունների նկարագ-

րութեամբ վիպասանը բանաստեղծականացնում է նահատակվողների՝ չարի դեմ պայքարելու անկարողությունը:

Բուն կոտորածի պատկերը ներկայացված է զուսպ, բայց անչափելի զայրույթով: Թուրքական իշխանությունները խաղաղ կյանքով ապրող Դիլիջան քաղաքի բանկի պատին գրություն են փակցնում, որով տասնչորս տարեկանից բարձր բոլոր հայ տղամարդկանց հրամայվում է հավաքվել Գափուում, ուր գտնվում են զորանոցը և ռազմական ոստիկանության վարչությունը՝ կարևոր հայտարարություն լսելու: Մինչ այդ լուրեր էին պտտվում Վանում և Ուրֆայում տեղի ունեցած ավերածությունների և հայերի զանգվածային կոտորածների մասին: Սակայն կայսրության այս մոռացված ու խաղաղ անկյունում ապրող հայերի մտքով զարմանալիորեն չէր անցնում տրամաբանական հետևություններ անել այդ պատմություններից: Ընդհակառակը, մեծ մասը մտածում էր, թե տանում են ճանապարհ կառուցելու, և համապատասխան հագուստներ է վերցնում: Նշված ժամին հայ տղամարդիկ՝ որպես օրինավոր քաղաքացիներ, հավաքվում են զորանոցում և լուռ կանգնում պատի տակ: Զինվորներն ու սպաները, քիչ հեռվում կանգնած, հետևում են: Թուրքերը չեն շտապում: Հայերը լարվում են: Ապա Հաշիմ Ֆարուքը հայերին երկու շարքով պատի տակ է կանգնեցնում և կարդում անհեթեթ ու ճիվաղային հետևյալ հայտարարությունը. «Որովհետև կայսերական ռազմական նախարարության հատուկ լիազորությամբ Դիլիջանում գործող ռազմական դատարանը հաստատում է կայսրության անվտանգության համար դավաճանական և կործանարար գործողությունների առկայությունը՝ բոլորը հատկանշական հայոց ազգի և հավատի անձանց, և որովհետև այս հավատի և այս ազգի մարդկանց ստախոսության պատճառով անհնար է գտնել անմիջական հանցագործներին, քանի որ բոլորը մասնակից են այդ գործողություններին և մեղավոր, Դիլիջանում գործող ռազմական դատարանը մեղադրում է տասնչորս տարեկանից բարձր արական սեռի հայ բնակչությանը...» (37):

Հայերը դատավճիռը մինչև վերջ չեն լսում. հասկանում են՝ ինչ է սպասում իրենց, բայց դիմադրության ոչ մի փորձ չեն անում, որովհետև պատի տակ զոհի նման շարված հազարից ավելի հայերի ուղեղները մթազնել էին: Իսկ երբ ուղեղն ու հոգին չեն աշխատում, սովորություն է մեխանիկորեն որոշում մարդու անելիքը: Իսկ Թուրքիային հպատակ հայերին չորս հարյուր տարի շարունակ արգելել էին զենք կրել, և ինքնապաշտպանության բնագործ վերացել էր: Դատավճիռի տեքստն ընթերցելով՝ Ֆարուքը, որը դիմադրության փորձի չէր էլ սպասում և նույնիսկ մի քիչ հապաղում է, որ զինվորները լավ նշան բռնեն, կրակելու հրաման է արձակում: Հիպնոսացած հայերը միայն հրացանազարկերը լսելուց հետո են ասես արթնանում և բղավելով այս ու այն կողմ նետվում: Մեծ մասն սպանված փռվում է պատի տակ, իսկ զինվորները, առանց հրամանի սպասելու, հրացանները լիցքավորում են և կրակում փախչողների հետևից: Օդը լցվում է ահասարսուռ գորգորոցով, մեռնողների աղաղակով... Ոճիրն ի կատար ածելուց հետո զինվորներին ազատ են արձակում, որպեսզի սրանք մասնակցեն հայկական թաղամասի թալանին ու բռնաբարությանը, որի համար սպանողն ազդանշան էր:

Տեսարանի ողբերգականությունն ամփոփում է հայ տղամարդու /հեղինակի մոտեցմամբ՝ ընդհանրապես բարոյական մարդու/ էությունն ընդհանրացնող էմանուելի կերպարը: Վերջինիս մարմինը զինված թուրքերի առջև էր, բայց «ինքը՝ էմանուելը, ուրիշ տեղ էր: Նրա մարմինը հասել էր Գափու, բայց կամակոր մտքերը տիրոջը հետևող շան նման այս ու այնտեղ թափառում էին՝ հապաղելով այս տեսարանի առջև, նվաղելով այն երազանքից, և ժամանակ առ ժամանակ շտապելով տուն՝ Մարիամին տեսնելու: Հենց այս պահին նա մտքերով տանն էր և Գափուի տեսարանից ապահով՝ ուրախ ու հանգիստ զվարճանում էր կնոջ հետ» (38):

Դիտելի է, որ Գրոսքլոուսը հիվանդագին ազգայնամոլությունից առողջ բանականությունը կորցրած վերնախավի կույր ատելությանը հակադրում է հասարակ թուրքերի մարդասիրական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Հնավաճառ Իբրահիմ էֆենդին մինչև դատավճռի իրականացումը հորդորում է Լայռլին գնալ Ֆարուքի մոտ և երաշխիքներ պահանջել, որ հայերի դեմ ոչ մի խռովություն չի հրահրվելու: Իսկ դատավճռից հետո, երբ Բարի փաշան՝ Դիլիջանի գավառապետը, որ հին կարգով դաստիարակված աստվածավախ մարդ է, լսելով, որ հայերի մի մասը ջարդից խուսափել ու ապաստանել է Լայռլի ավանում, թեթևություն է զգում: Մեծահարուստ Մուրադ բեյի վերաբերմունքը կոտորածին նույնպես բացասական է. նա գտնում է, որ Հաշիմ Ֆարուքը ծառայում է սատանային, և Արևելահայաստան փախած հայերը ալլահի կամքով են փրկվել:

Հայկական իրականության համար «Արարատը» պետք է հույժ կարևոր լինի նաև այն տեսանկյունից, որ, բացի հայերի կրած մարմնական և հոգևոր տառապանքները նկարագրելուց, գեղարվեստական ազդեցիկ պատկերներով ներկայացնում է այն փուլերից մի քանիսը, որոնք 1948-ին՝ վեպը տպագրվելուց 11 տարի անց, ՄԱԿ-ի կոնվենցիայի կողմից դասակարգվել են որպես ցեղասպանության հատկանիշներ: Այսպես, այն իրողության հիշատակումը, որ Դիլիջանի ներսում և շուրջը հողագործ հայեր չկային, որովհետև հողը հատկացվել էր թուրք գյուղացիներին, համապատասխանում է ցեղասպանության առաջին փուլին, որն անվանվում է դասակարգում: Հաշիմ Ֆարուքի՝ վերը մեջբերված մտքերը հայերի գերազանցության վերաբերյալ նույնպես առաջին փուլի տարրեր են պարունակում այն առումով, որ ազգային ու կրոնական պատկանելության հատկանիշներով ամբողջ ազգն առանձնացվում է: Ֆարուքի կարդացած դատավճռի տեքստը ևս համապատասխանում է առաջին փուլին, որովհետև 1000-ից ավելի քաղաքացի մեղադրվում է մի ընդհանուր, անհասկանալի հանցանքի մեջ՝ ըստ ազգային պատկանելության: ՄԱԿ-ի կոնվենցիայի դասակարգման համաձայն՝ ցեղասպանության չորրորդ փուլը գործողությունների կազմակերպվածությունն է: Գրոսքլոուսի նկարագրած ողբերգությունը պետական մարմինների կողմից հանգամանորեն կազմակերպված գործողություն է, համաձայնեցված շարժում, որը ղեկավարվում է վերևից: Ցեղասպանության հինգերորդ աստիճանը՝ բևեռայնացում, նույնպես գեղարվեստական նկարագրություն է գտել վեպում. արական սեռի հայ բնակչությանը չորս հարյուր տարի շարունակ արգելվել էր զենք կրել, թեպետ դարեր շարունակ սուլթանի ընտիր զորագունդը՝ ենիչերիները, հավաքագրվում էին հայերից: Բանտի պատին փակցված գրությունը և դրա առաջացրած մթնոլորտի նկարագրությունը համապա-

տասխանում են վեցերորդ փուլին՝ պատրաստություն, իսկ սպանդի տեսարանի և թալանի նկարագրությունը՝ յոթերորդ աստիճանին, որը կոչվում է զանգվածային սպանություններ: Ի տարբերություն Թուրքիայում իրականացված կազմակերպված կոտորածի՝ Բաքվի 1905-ի դեպքերը ներկայացվում են որպես անկանոն շարժում, չնայած հայերի կարգավիճակի նկարագրության մեջ ևս ակնարկվում է ցեղասպանության հինգերորդ աստիճանի գոյությունը. հայերը թեպետ կազմում էին նորելուկ բուրժուազիայի հիմնական մասը, քաղաքական ճնշման էին ենթարկվում ու կազմում բնակչության անկայուն մասը:

«Արարատ» վեպում թուրքերի իրականացրած բուն ցեղասպանությունը նկարագրվում է «Մահապատիժ» գլխում, որը 48 գլխից կազմված այս մեծածավալ երկի 5-րդ գլուխն է: Այսինքն՝ վեպն սկսվում է ցեղասպանության նկարագրությամբ: Մնացած 43 գլուխներում Գրոսքլուսը նկարագրում է ամբողջ տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը, որպեսզի ընթացողին ցույց տա, որ հայերի կոտորածն անսպասելի ոճիր չէր. հետևանք էր բարոյական այն մթնոլորտի, որն ստեղծվել էր աշխարհում այդ հանցագործությունից շատ առաջ և շարունակեց տիրել աշխարհին նաև շատ հետո՝ առաջացնելով նորանոր նախճիրներ:

2. 4. Սոցիալիստական հեղափոխության նկարագրությունը

Վեպում Ռուսական սոցիալիստական հեղափոխությանը և նրան նախորդած դեպքերի նկարագրությանը հատկացվում են ինը տասնյակ էջեր: Մինչ այդ պատկերված հերոսներից միայն գնդապետ Մարկովն է տեղափոխվում իրադարձությունների այս հատվածը, և միայն Բաքվում հայերի կոտորածի նկարագրությունն ընդհանրություն ունի մինչ այդ նկարագրված գործողությունների հետ: Առանձին վերցրած՝ այս հատվածը կարող է դառնալ ինքնուրույն պատում՝ նպատակասլաց ընթացող դիպաշարով, զագաթնակետով և հանգուցալուծմամբ: Գրոսքլուսը, սակայն, այս իրադարձության նկարագրությունը փիլիսոփայորեն միահյուսել է վեպի ընդհանուր բովանդակությանը՝ աշխարհում ստեղծված բարոյականությամբ պայմանավորելով թե՛ կոտորածի և թե՛ հեղափոխության իրականություն դառնալու իրողությունը:

Համառոտ, սակայն խիստ դիպուկ պատկերելով ցարական Ռուսաստանի քաղաքական, տնտեսական և կրոնական մարմինների կառուցվածքը՝ վիպասանը նկարագրում է բյուրոկրատական հսկայական մեխանիզմի աստիճանական քայքայումը, որը հեղափոխության շեմին հասել էր իր ավարտական փուլին: Հեղինակն ստեղծում է հեղաշրջումն իրականացրած շարքային զինվորի տիպիկ կերպար /Վասիլի Կուչենկո/, պատկերում է հեղափոխության մի դրվագ, ապա ներկայացնում է հեղափոխության պարագլուխների բարոյախոսությունն ու հեղափոխության տխուր հետևանքները՝ դաժանացած մարդիկ, ավերածություն, բանտ... Ցարական կայսրության ընդհանուր քայքայման առաջին շոշափելի նախանշանը բանակում տիրող անտարբերությունն էր: Ջինվորներն սկսել էին դժկամորեն ենթարկվել կարգուկանոնին, իսկ սպաները շահագրգռված չէին նրանց կարգուկանոն հարկադրել: Բարգավաճման համար նպաստավոր հանգամանքներ ունենալով՝ մարքսիստական խմբակները կամ բջիջները բա-

նակի անտարբեր ու անտեղյակ հրամանատարների քթի տակ ներսից ավելի էին քայքայում բանակի մարտունակությունը: Բջիջներից մեկի ղեկավարը քննարկում է խռովության ընթացքը և կարդում այն սպաների անունները, որոնց պիտի բռնեին խռովությունն սկսվելուն պես: Երկաթյա կամքով օժտված հեղափոխականները կյանքի հատակն ընկածներին ու ճակատագրից հալածվածներին խոստանում են կենսակերպի շեշտակի փոփոխություններ: Մարկովի հանձնակատար Վասիլի Կուչենկոն այն հազարավորներից մեկն էր, ով, իր կամքից գրեթե անկախ, Վոլինսկու կրակոտ կոչի հմայքի տակ ցուցակագրվել էր մարքսիստական խմբին և այժմ պարտավոր էր կատարել վճռական գործողություն. պետք է ձերբակալել իր իսկ հրամանատարին, որին սիրում է «տիրոջը պաշտող շան նվաստ սիրով»: Հեղափոխություն իրականացրած Վասիլիի նման շարքային քաղաքացիները չեն պատկերացնում նաև հեռանկարները. «Երբ այդ օրը գա, և ես ստիպված չլինեմ կոշիկներ փայլեցնել, սպայիս համազգեստներն արդուկել և նրա հանձնարարությունները կատարել, նավակ կնստեմ և դուրս կգամ ծով: Հետո կգնամ...»: Այստեղ Վասիլին շվարում է, որովհետև չի պատկերացնում՝ ուր պիտի գնա, իսկ ամենաողբերգականն այն է, որ խեղճ մարդը հանկարծ գլխի է ընկնում է, որ ինքը ոչ մի տեղ էլ չի ուզում գնալ: Ավելին, Վասիլին չի պատկերացնում՝ ինքն ինչ պիտի անի, եթե իր սպան սպանվի, եթե բոլոր սպաները սպանվեն (189-190):

Գրոսբլոուսը շատ պարզ դեպք է ընտրել՝ նկարագրելու համար մի սահմանային իրադրություն, որն աշխարհը բաժանեց երկու թշնամական գաղափարախոսությունների: Գիշերը կրակոցներ են լսվում, և շրջահայացորեն իր վաշտում հսկողությունն ուժեղացրած Պավել Մարկովը կանչում է իր հավատարիմ հանձնակատարին: Ծառայության ընթացքում առաջին անգամ Վասիլին չի պատասխանում հրամանատարի կանչին: Սա արդեն նշանակում է, որ դրությունը խիստ լուրջ է՝ հեղափոխությունն սկսվել է: Մարկովը՝ պատրաստ անհրաժեշտության դեպքում ծայրահեղ միջոցների դիմելու, դուրս է գալիս փողոց, որտեղից լսվում է քաղաքի տարբեր մասերում արձակվող կրակահերթերի աղմուկը: Նա դեմ հանդիման կանգնում է իր զինվորների վրա կրակելու անհրաժեշտության առջև, և նրա երկաթյա կամքը տեղի է տալիս. վճռական պահին չի կարողանում գնդակ արձակել իր զինվորների վրա, որոնց հետ կիսել էր պատերազմի բոլոր դժվարությունները, և վախկոտի նման փախչում է իրեն հետապնդողներից, որոնց թիվը գնալով ավելանում է, իսկ թշնամությունն ու ատելությունը՝ սաստկանում: Դժվարությամբ ազատվելով իրեն հետապնդող ամբոխից՝ Մարկովը որոշում է միանալ իր զորամասին և քողարկված, կեղծ անձնագրով, փախստականի նման ճանապարհի կեսն անցնելուց հետո հասկանում է, որ դա անօգուտ ճամփորդություն է, որ բանակն այլևս գոյություն չունի: Ապստամբության բոցերի մեջ կործանվող իր սիրելի հայրենիքի իրավիճակին սարսափահար ականատես լինելով՝ նա մի կերպ հասնում է Կազան՝ իշխան Չերնիլովի մոտ, որը Կազանի նահանգապետն էր, սակայն իշխանը հողացավը բուժելու պատրվակով մի տարի առաջ փախել էր Փարիզ: Իր հայրենիքում տարագրի վիճակում հայտնված Մարկովը քայլերն ուղղում է դեպի Վարսովա՝ պապենական կալվածքները՝ ճանապարհին ականատես լինելով զանգվածային խռովությունների նորանոր կործանարար հետևանքների:

Էլջին Գրոսքլոուսը վարպետությամբ վերարտադրում է հեղափոխության բերած աղետները՝ ֆիզիկական ավերածությունների դաժան պատկերները միահյուսելով հոգեկան այն անվերականգնելի խաթարումներին, որ կրել էին ռուսական հողն ու ռուս մուժիկը: Նրան նաև հաջողվում է ստեղծել նախահեղափոխական Ռուսաստանին բնորոշ քնարական տեսարաններ, որոնցում հիանալիորեն արտացոլվել է ռուսական ոգին: Այսպես, Մարկովը քայլում է Վարսովա տանող ճանապարհով՝ անհամբերությամբ սպասելով, որ շուտով կզգա այն ջերմությունը, որ զգացել էր ամեն անգամ՝ հայրական տուն գնալիս: Սակայն որքան մոտենում է, այնքան բնությունն ավելի լուռ ու լքված է թվում: Ինչ-որ չարագուշակ բան հալածում է նրան. ասես մտել է անշունչ կտավի մեջ և դարձել նրա մի մասը: Եվ հանկարծ պատճառը հասկանում է: Մարկովի միայնության սոսկալի զգացողությունը ճռճռացող սայլերի բացակայությունից էր: Առավոտից նա այդ ձայնը չէր լսել: Վարսովայի մոտակայքում վառված խոտի և անտառների տարածքներ են երևում, որը նրան հիշեցնում է պատերազմի դաշտը. դրանք այրել էին կոմունիստները գյուղացիներից սննդամթերք ու հացահատիկ ձեռք բերելու նպատակով: Հայրենի տունը մոխրակույտի էր վերածվել, որի միջից երևում էին ծռմռված ջահեր ու նկարների շրջանակներ. «Ի՞նչ էր կատարվում իր սիրելի հայրենիքի հետ: Այդ ի՞նչ ուժեր էին, որ ժանտախտի պես ավերելով՝ երկիրը ոտնատակ էին անում: Ի՞նչ էր պատահել, որ մարդիկ իրար դեմ էին ելել, մինչդեռ թշնամին դեռևս սահմանների մոտ էր: Մի՞թե ռուս ժողովուրդը խելագարվել էր: Ի՞նչն էր բորբոքել այս ամբողջ արհամարհանքն անցյալի փառավոր ավանդույթների և գեղեցիկ ու ներդաշնակ կարգի նկատմամբ, որ հաստատվել էին սերունդներ շարունակ, ինչի՞ց էր առաջացել ռուսի այս ատելությունը ռուսի նկատմամբ, և այն ամենը, ինչ հին է, դիմացկուն և գեղեցիկ, անմտորեն ոչնչացնելու այս մոլուցքը» (223):

Նա այս հարցերի պատասխանն ստանում է շատ շուտով: Սեփականություն, պաշտոն ու ապահովություն չունեցող մարդիկ, որոնք կործանել էին այն ամբողջ կարգը, որ ստեղծվել էր հարյուրավոր տարիների ընթացքում, քաղաքի հրապարակում ժողով էին գումարել և քննարկում էին իրենց հետագա գործողությունները: Հռետորը հավաքվածներին կոչ էր անում հաստատել իրենց ուժը՝ տեր կանգնել պրոմեթևսյան իրենց ժառանգությանը: Իսկ Պրոմեթևսն ինքը՝ ռուս պրոլետարիատն էր, որ կրակը հասցրել էր Ռուսաստանի զոհասեղանին և սնունդ էր տալիս ռուսական մշակույթի բոցերին: Պրոլետարիատը շղթայակապ Հերկուլեսն էր, որ կատարում էր աստվածների կարգադրած տասներկու հանձնարարությունները: Իսկ Հերկուլեսին շղթայել էր ոչ այլ ոք, քան ցարը, որն էլ չարչարում է Պրոմեթևսին, սեփականության իրավունքը, եկեղեցին և կապիտալիստները, որոնք նստում են Օլիմպոսի գագաթին, ծիծաղում և խնում իրենց նեկտարն այն դեպքում, երբ Պրոմեթևսն ու Հերկուլեսը շղթաների մեջ են: Պրոմեթևսներն այժմ դեմ են նետել իրենց շղթաները և ընդունում են իրենց աստվածային բնույթը: Հռետորը ծղրտալով, որ Աստված չկա, որ ժողովուրդն է աստված, հավաքվածներին կոչ է անում հաստատել իրենց կամքի ուժը և ստեղծել նոր Ռուսաստան՝ լի մարդուն անհրաժեշտ բոլոր բարիքներով, որոնք նրանց մերժել են երկրի նախկին տերերը:

Երիտասարդ Մարկովը սարսափում է՝ լսելով «անհաղթահարելի կամքի» և Պրոմեթևսի պատմության ծանոթ թեմաների նոր մեկնաբանությունը, որն ամփոփում է հեղափոխության էությունը: Մարկովն ինքը և ժամանակի բոլոր ազնվականները դաստիարակվել էին այդ նույն «անհաղթահարելի կամքի» սկզբունքներով: Նրանց սովորեցրել էին, որ պրոմեթևսյան կամքի գործադրմամբ էր ստեղծվել ռուսական կայսրությունը, փառապանծ ցարեր Իվանի, Պետրոսի և Եկատերինայի անհողողող կամքով: Մարդկային կամքն էր ստեղծել աշխարհում գոյություն ունեցող ամբողջ կարգը: Այդ կամքն էր ստեղծել ընտանիքներ, միավորել պատերազմող ցեղերին, թագավորություններ ու կայսրություններ կազմավորել: Այդ կամքն էր ճնշում մարդուն ներհատուկ չար հակումները, իշխում նրա հոռի ցանկությունների և կրքերի վրա: Մարդկային կամքը երկիր էր իջեցրել Աստծու արքայությունը, որի մասին խոսում էին քահանաները: Իշխելու այս նույն «գերմանական կամքով» էր Գերմանիայի կանցլերը տարիներ առաջ տեղ պահանջում արևի տակ, նույն կամքով ժամանակին առաջնորդվել էին Պետրոս ցարը, Եկատերինան, իսկ սրանք ընդամենը հետևել էին Հռոմի կեսարների օրինակին, որոնք աստվածացրել էին իրենց և մեծարել իրենց կամքը՝ այն դարձնելով դավանանք, պաշտամունք, կրոն, տիեզերական ճակատագիր: Սա է եվրոպական քաղաքակրթության ստեղծած մշակույթի ու մտքի հիմքը, և «թեպետ այդ քաղաքակրթությունը երկրպագում էր Աստծուն և կրկնում «Քո կամքը թող լինի», իրականում երկրպագում էր «ես»-ի կամքը. «Ես կամենում եմ»» (227): Բորբոքվելով այն հայտնագործությունից, որ կամքը նաև հեղափոխության ելակետն էր, Մարկովը հանկարծ տեսնում է իր դավանած գաղափարախոսության սնանկությունը:

Գրոսբլոուսը դատապարտող ոգով է ներկայացնում նաև հռետորի գռեհիկ ու երկարաշունչ ճառը եկեղեցու և եկեղեցական համակարգի դեմ. «Քրիստոսը սովորեցնում էր հնազանդվել և ենթարկվել ավելի բարձրագույն կամքի: Բայց ինչո՞ւ պիտի հպատակվենք ավելի բարձր կամքի: Ի՞նչ ավելի բարձր կամք կա, քան մարդու կամքը: Աստված չկա: Նա գոյություն չունի: Դուք չեք կարող ապացուցել, թե Նա գոյություն ունի: ...Երկինքն ուսումնասիրող ոչ մի աստղագետ Աստծու տեղը չի գտել: Այդ բոլոր պատմությունները բանվորին հպատակեցնելու միջոց են: Ցարը, մետրոպոլիտները և կապիտալիստները խոսում են, և այն հրամանները, որ նրանք արձակում են, «Աստծու կամքով են»: Ո՛չ, ընկերներ, Աստված չկա: Դուք եք Աստված: Դուք ձեր ճակատագրի տերն եք: Այն, ինչ չի կարող ապացուցվել տրամաբանությամբ, անհնար է շրթունքներով ձաշակել, գոյություն չունի: Եթե Երկինքը գոյություն ունի, ապա դուք ինքներդ եք ստեղծում այն: ...Կրոնը ժողովրդի թմրադեղն է» (228): Պոլ Ստեփանովիչն այս բոլոր խոսքերը նույնպես լսել էր, թեպետ ոչ այսպիսի կտրուկ և հանդուգն ձևով: Նրան սովորեցրել էին սառը ցինիզմով վերաբերվել այն եկեղեցուն, որին մայրը երկրպագում էր: Այդ վերաբերմունքը նրա մեջ մասամբ սերմանել էր հայրը, որը կրոնը համարում էր սնահավատություն, և իշխան Չերնիլովի նման համարձակ աթեիստներ: Սակայն ցարական մտավորականությունը, որի մեծ մասը աթեիստ էր, չէր համարձակվի բարձրաձայնել, թե «կրոնը ժողովրդի թմրադեղն է», որովհետև եկեղեցու գլուխն անվանապես ցարն էր, և դատապարտել եկեղեցին՝ կնշանակեր դատապարտել միապետությունը: Դրա փոխարեն նրբանկատորեն

ակնարկվում էր, թե աշխարհը հիմնված է գիտական սկզբունքների վրա և ղեկավարվում է անըստօրինակ Օրենքով: Այս գաղափարները Դարվինի մարդաբանական տեսության և Բյուխների ու Մոլեսխոտի դիալեկտիկական մատերիալիզմի արձագանքներն էին: Մարկովը նույնպես հրապարակել էր աշխարհը կառավարող բացարձակ ու ամենակարող Օրենքի գաղափարով և գիտականորեն ուսումնասիրել այն, սակայն այն բոլոր բարդ, բայց գեղեցիկ բաները, որ նա սովորել էր, ամփոփված էր հեղափոխության այս քարոզչի մերկապարանոց հայտարարության մեջ. «Աստված չկա» (229-230):

Շվարած Մարկովին անբանական է թվում, որ կոմունիստներն օգտագործում էին նիցչեական այն նույն գաղափարները կամքի, աստվածային իրավունքի հաստատման և Աստու բացասման մասին, ինչ իր բոլոր ազնվական ընկերները: Եվ նա վերջապես ըմբռնում է, որ աշխարհի բոլոր նվաճողներն առաջնորդվել են նույն օրենքով, որը ջունգլիների օրենքն է կամ ամենահարմարների գոյատևման օրենքը, իսկ ամենահարմարը նա է, ով ունի ամենաուժեղ ժանիքները, ամենամեծ իշխանությունը, ամենախորաթափանց բանականությունը, նվազագույն խղճահարությունը, ամենակոպիտ զգայությունները, գրեհկագույն ցանկությունները:

Հեղափոխության թոհուբոհով անցած Մարկովն ի վերջո ձերբակալվում է: Սա հեղինակին հնարավորություն է տալիս պատկերելու Արտակարգ հանձնաժողովի՝ չեկայի գործունեությունը, և հեղափոխության անկապտելի մասը՝ բանտը:

Վեպի չորս գլուխներում, որոնք վերնագրված են «Ձերբակալություն», «Արտակարգ հանձնաժողով», «Բանտ» և «Մահադաշտ», հեղինակը հանգամանորեն նկարագրում է խորհրդային պատժիչ մեքենայի գործունեությունը: Համառոտ ներկայացնելով Արտակարգ հանձնաժողովի ստեղծման հանգամանքները՝ Գրոսբլոուսը պատկերում է այն որպես բռնակալական գործակալություն, որն իր դաժանությամբ զիջում է միայն կարմիր բանակին: Իսկ նրա կիրառած մեթոդները չեն համապատասխանում հեղափոխության լուսավոր նպատակներին: Չեկայի կիրառած վերահսկողության մեթոդները նույնն են, ինչ ցարական *օխրանայինը*, որն էլ ընդօրինակել էր ֆրանսիական հանրապետության պատժիչ մեխանիզմը: Վերջինս իր հերթին օգտվել էր Ֆրանսիայի թագավորների կիրառած մեթոդներից, սրանք էլ կատարելագործել էին Հին Հռոմի մեխանիզմը: Մարդկության ամբողջ պատմության ընթացքում դաժանությունը, կտտանքները, մահապատիժը, լրտեսությունը, բանսարկությունը կառավարողների համար եղել են իշխանությունը պահպանելու միջոցներ: Մարդկությունը մշտապես ապրել է շրջապատյտի մեջ: Նույն գաղափարները հասարակական տարբեր շերտերի կողմերից տարբեր մեկնաբանություններով մարդուն հասցրել են 20-րդ դար՝ այդ ամբողջ ընթացքում դաժանության նորանոր ձևեր հորինելով, որպեսզի մարդու կրքերը սանձվեն, մարդը լինի տիրողներին հնազանդ քաղաքացի:

Լուսավոր ապագա խոստացող հեղափոխության ստեղծած պատժիչ համակարգի էական տարբերությունը մինչ այդ եղածներից այն է, որ պատժվում էր անժայրածիր Ռուսաստանի ամբողջ վերնախավը: Հենց որ կարմիր բանակը նոր տարածք էր գրավում, չեկան լրտեսների և սադրիչների հսկայական բանակի օգնությամբ ներս էր մտնում՝ հակահեղափոխական

քարոզչության դեմ պայքարելու: Առանց վկաների կամ մեղադրյալների լսելու՝ դատում էին, սովորաբար մեղավոր ճանաչում ու գնդակահարում: Որքան հեղափոխությունը տարածվում էր, իսկ հեղափոխական մոլեռանդությունը՝ բորբոքվում, չեկայի գործունեությունն այնքան ընդլայնվում էր, բանտերի թիվը՝ բազմապատկվում: Այն նույն մարդիկ, ովքեր, վեհ նպատակներ քարոզելով, միլիոնավորների ոտքի էին հանել և իշխանությունը գրավել, այժմ դիմում էին այն նույն մեթոդների կիրառությանը, որոնցով հարձակվել էին իրենց վրա, ցուցադրում էին նույն անգթությունն ու անմարդկայնությունը, որոնց դեմ պայքարել էին:

Չեկայի գործունեությունը պատկերվում է Վլադիմիր Բելինսկու՝ Կազանի չեկայի ղեկավարի կերպարով: Նա հեղափոխությունից առաջ եղել էր մաթեմատիկայի ուսուցիչ և գրպանում միշտ կարկանդակ ունեցել՝ երեխաներին հյուրասիրելու համար: Նախկին ջերմեռանդ մարդասերն ու հայրենասերը Մարքսի և Էնգելսի տեսություններից համոզվել էր, որ համաշխարհային նոր կարգ կարել էր ստեղծել միայն բանվոր դասակարգի ազատագրմամբ: Իր համարձակ գաղափարների համար աքսորվել էր Սիբիր, որի սառնամանիքներն ավելի էին կոփել հեղափոխականի նրա կամքը և, որպես անաչառ և համոզված կոմունիստ, հաղթանակից հետո ընտրվել էր Կազանի չեկայի ղեկավար: Պաշտոնի անցնելով՝ Բելինսկին կատարել էր մարդասերի իր պարտքը. դադարեցրել էր զանգվածային կողոպուտն ու բռնությունները, արգելել էր կասկածելի մարդկանց գտնելու նպատակով տներ ներխուժելու և մարդկանց սպանելու պրակտիկան, վերջ էր տվել բանտարկություններին, բացի նրանցից, որ կատարվում էին իր հրամանով: Հասարակության անդորրը չխախտելու նպատակով հրամայել էր ձերբակալություններն անել գիշերը, իսկ մեղադրյալի հարցաքննությունը դարձրել էր անհրաժեշտ: Վերջինիս վկայությունները գրի էին առնվում և դառնում արձանագրության մաս: Մահապատիժները նույնպես իրականացվում էին գիշերը: Մարդասիրական այս բոլոր բարեփոխությունները, սակայն, ակնկալված ազդեցությունը չէին թողել. գիշերային ձերբակալություններն ահ ու սարսափ էին սփռել բնակչության մեջ:

Այն բանտը, որտեղ հայտնվում է Մարկովը, զբաղեցնում էր նախկին մեծահարուստի առանձնատան՝ փողոցի մակերեսից ներքև գտնվող հարկերը, որոնք միջնապատերով բաժանվել և վերածվել էին բանտախցերի: Յուրաքանչյուր խցում երեսուցից քառասուն մարդ էին պահում, որոնք գիշերում էին անվաղողերի մեջ կամ պատին ամրացրած դարակներում: Այն կարող էր տեղավորել հինգ հարյուր մարդու, բայց երբեմն բանտարկյալների թիվը գերազանցում էր, որովհետև այն ընդամենը մի կարճ կանգառ էր գերեզման տանող ճանապարհին, որով անցնում էին հազարավոր մարդիկ: Բանտի պատերի ներսում կյանքը սառցակալել էր. այն ասես մոմակերտ մարմինների թանգարան լիներ. բոլոր մարդիկ գունատ էին, հուսալքված ու սարսափած: Երեկոյան կարճատև շարժում էր սկսվում. դուռը բացվում էր, և հատակին հաց ու կաղամբապուրով լի կաթսա էին դնում: Ապա բանտարկյալները նորից ընկղմվում էին ընդարմության մեջ... Տեղափոխությունները սովորաբար ուշ գիշերն էին կատարվում, երբ մարդիկ գարշահոտ օդից անզգայացած ու հիպնոսացած վիճակում էին, և ոչ մեկի համար գաղտնիք չէր, որ իրենց տանում էին մահապատժի: Խցում տիրող մթնոլորտի ամենաէական

զգացումը սարսափն էր: Բանտարկյալներն իրար հետ չէին շփվում. յուրաքանչյուրն իր շուրջն ստեղծել էր առանձնահատուկ ոգեղեն խուց, որի պատերն ավելի հաստ ու անթափանցելի էին, քան գնդանինը, և սպասում էր ահաբեկչության զոհը դառնալու իր հերթին:

2. 5. Արարատ լեռան գործառույթը

Արարատ լեռը վեպում ունի այլաբանական երկու նշանակություն. խորհրդանշում է Աստվածային կամքը և Հայաստանի վերածնության գաղափարը: Հեղինակի պատկերացմամբ՝ երկրորդը տրամաբանորեն բխում է առաջինից: Եթե մարդ ընդունում է, որ Արարատ լեռն Աստծու գոյության իրեղեն ապացույցն է, ապա չի կարող ժխտել, որ բիբլիական լեռան տեղադրությունը հենց Հայաստանում ունի հատուկ ուղերձ: Արարատ լեռան աննախադեպ գեղեցիկ բազմաթիվ նկարագրություններում այս երկու գաղափարներն արտահայտվում են իրար հետ փոխկապակցված:

Առաջին անգամ բիբլիական սարը վիպական գործողությունների մեջ է մտնում վեպի երկրորդ մասում, երբ գնդապետ Մարկովն իր հանձնակատարի ուղեկցությամբ ուղևորվում է Անի՝ ռազմավարական տեսանկյունից ուսումնասիրելու ավերակները: Երբ հեռվում երևում է Արարատը, նա դիմում է իր հանձնակատարին՝ ասելով. «Երբ ցարը նվաճեց Բարձանը, նա դարձավ Եդեմի պարտեզի տերը: ...Ըստ ավանդության՝ Եդեմի պարտեզն այստեղ է եղել, ավելի ճիշտ՝ պարտեզի մի մասը: Արաքս գետը դրախտի երրորդ գետն է, որը հայտնի է Տիգրիս անունով... Հարավում՝ այստեղից ոչ շատ հեռու, սկսվում է Եփրատ գետի ակունքը, որը դրախտի չորրորդ գետն է: ...Արարատը հենց այն լեռն է, որի վրա նոյյան տապանը ջրհեղեղի ժամանակ հանգրվանեց» (82): Աստվածաշնչյան այս հանրահայտ պատմությանը հետևում է Անիի և նրա շուրջը փռված ավերակների մի ամբողջ հովտի տխուր նկարագրություն, որը եզրափակում է փառավոր անցյալի այդ բեկորների մեջ ծվարած Բարձան գյուղը՝ ռուս հզոր գեներալի առջև բացահայտելով նոր՝ արդեն «մարդկային» ավերակներ, որոնց մեջ, սակայն, Մարկովը հանդիպում է այլ տեսակի էակների, էակներ, որոնց սովալլուկ մարմինները թեպետև ցնցոտիների մեջ էին, բայց աչքերն այնպիսի ջերմությամբ ու վսեմ հափշտակվածությամբ էին ուղղված իրենց հովվին, որ հպարտ ազնվականի հոգում առաջացած բնական խղճահարությունն իր տեղը զիջում է ականածալից հարգանքի:

Աստվածաշնչյան Եդեմական պարտեզում նախախնամությամբ հայտնված ժողովուրդը ծայրահեղ աղքատության մեջ է, իսկ երկիրը՝ ավերակների: Թուրքերի և ռուսների միջև բաժանված հողերում բնիկներն օտար են: Առաջինները սրերով են հայոց հողը մաքրում հայերից, երկրորդներն իրենց շահադիտական խնդիրներն իրականացնելու համար ավելի քաղաքակիրթ ձևերի են դիմում, բայց վերջնական նպատակը շատ ավելի մարդասիրական չէ՝ ամրապնդել կայսրության սահմանները, ապահովել հզոր Ռուսաստանի ազդեցությունը հարավում՝ հայ ժողովրդին և հայոց հողերն օգտագործելով որպես պատվար թուրքական վտանգի դեմ: Սակայն և՛ թուրքական, և՛ ռուսական նկրտումները, ըստ ամերիկացի գրողի, հեռանկար չու-

նեն, որովհետև «ողջ հավատը, ողջ խորհուրդը գալիս-կենտրոնանում է Արարատի վրա, քանզի առաջին անգամ Աստված այստեղ է համաձայնություն կնքել մարդու հետ: Այդ գործողությանը Ամենակարողը սահմանափակել է իր ամենակարողությունը, Հավիտենականը ճանաչել է անցողիկին, աստվածայինը միացել է մարդկայինին, և մարդը բարձրացվել է առ Աստված» (117): Աստված հայերին սփռել է իր սրբազան լեռան շուրջը: Դարեր շարունակ հայերը կրել են Աստծուն լքած և իր սին կամքին ապավինած մարդկության ստեղծած դժոխքում ապրելու տառապանքները և վերապրել ու պահպանել են այն, ինչ իրենց մեծագույն նվաճումն է՝ ամուր ընտանիքը, և նրանց հավաքական կամքից է կախված իրենց երկրի հետագա ճակատագիրը, իսկ Արարատն անժխտելի ապացույց է, որ այդ ճակատագիրը լուսավոր է լինելու: Եթե ամերիկացի միսիոներ Ամոկս Լայլըն աներկբայորեն հավատում է բիբլիական լեռան շուրջը սփռված հայության՝ կործանման անվերջանալի շրջապտույտից դուրս գալու անխուսափելիությանը, ապա իրենք՝ հայերը, շատ ավելի իրատեսական վերաբերմունք ունեն իրենց ճակատագրի նկատմամբ: Արարատ լեռան դիմաց՝ Բարձանում, բավականին բարգավաճ համայնք ստեղծելուց հետո նրանք չեն դիմանում ռուս իշխանավորների ստեղծած արհեստական արգելքներին: Գյուղում բնակություն ստանալու համար պաշտոնական թույլտվությունը տարիներով հետաձգվում է, և հայերն աստիճանաբար լքում են այն: Միայն Ամոկս Լայլըն՝ խենթ թվացող միսիոներն է շարունակում մնալ այնտեղ՝ հայկական հողին համառորեն կառչած: Յուրաքանչյուր կորստից, ամեն մի կարևոր դեպքից հետո նա հայացքը հառում է Արարատին՝ հայաստանյան իրականության հետ բոլոր հարաբերություններում իր ընկերակցին ու սփոփչին, և պատասխանի ու հույսի սպասում նրա խոռոչներից: Գործարար Նշան Քոկյանը լքում է հայրենի եզերքն ու մեկնում Ամերիկա, և Լայլըն մարգարեի նման նորից նայում է Արարատին, և այդ պահին մռայլ ու խավար սարի տեսքը նույնքան մարդկային է, որքան մարդունը. «Ամոկս Լայլըն երկար ժամանակ նստեց իր տան սանդղամուտքին, ինչպես հաճախ էր անում՝ նայելով, թե ինչպես էր մութն ընկնում, ինչպես էր գիշերը ծածկում հարթավայրը, և խավարը խավար ջրերի պես Արարատի լանջերով վեր բարձրանում, մինչև որ միայն կլոր գմբեթը մնաց հեղեղից վերև՝ թույլ վարդագույն լույսի շողերով պարուրված: Կամաց-կամաց գազաթի լույսն էլ մարեց, և միայն մի եզակի գունատ շողիկ մնաց, ապա դա էր սավառնեց-գնաց, ինչպես տապանից բաց թողնված աղավնին, որպեսզի առավոտյան նորից վերադառնա լեռան կատար» (152):

Արարատ լեռան գրոսբլուսյան նկարագրություններում կարծես աղոթքի նման մարգարեություն է հնչում այն մասին, որ Հայաստանը վերածնվելու է, որովհետև այդպիսին է Աստծու կամքը: Խավարով պարուրված Արարատի բանաստեղծական այս տեսարանի փիլիսոփայությունն ամբողջացնում է փոքրիկ Սիրանն իր մարգարեական հարցով. «Կարծում ես՝ Բեթլեհեմի աստղը նորի՞ց է փայլելու» (152):

Հայրողիներն ընկրկում են իրական դժվարությունների առջև ու հեռանում օտար ափեր՝ երջանկություն փնտրելու: Անխռով ու հեռավոր Արարատի փառահեղ տեսիլքի մեջ քարացած աստվածային կամքը նրանց ոչինչ չի ասում: Երբ Նշան Քոկյանն Ամերիկա մեկնելուց առաջ

գալիս է Լայռլին հրաժեշտ տալու, վերջինս ասում է. «Ամերիկան մեծ երկիր է, Նշան, հնարավորությունների երկիր: Բայց Աստված այս երկրի վրա է քայլել: Սա է եղել Նրա այգին հնուց ի վեր, և Նա սիրում է սա: Մի օր այն կանգնելու է հենց այնպես, ինչպես Նա է ցանկանում» (150): Գրոսբլոուսը թերևս այս խոսքերն է ցանկացել բացականչել այն օրերին, երբ քայլել է հուսալքության ու աղքատության շեմն անցած հարյուր հազարավոր փախստականներով լեցուն Ալեքսանդրապոլի խորշակահար փողոցներով:

Արարատը՝ որպես Աստվածային կամքի խորհրդանիշ, ուցեկցում է նաև Պավել Մարկովին Հայաստանում նրա հայտնվելու առաջին իսկ պահից: Գրական մեծ վարպետությամբ և փիլիսոփայական վերացարկմամբ է նկարագրված այն տեսարանը, երբ Մարկովն առաջին անգամ գնացքի պատուհանից տեսնում է Արարատը: Հեռվում՝ ամպերի մեջ, միայնակ մի լեռնագագաթ է երևում, որը սկզբում ձյան զանգվածի է նմանվում, հետո դառնում երկինք խոյացած, ձյունածածկ, կոր գմբեթ. «Ղա միայնակ սար էր, մեռության շունչ կար նրա ուսերին, ասես նրա բոլոր ընկերներն անհետացել էին հորիզոնում, որպեսզի այլևս չվերադառնային, ասես նա կրկին հայտնվել էր, որպեսզի մի վերջին հայացք նետեր աշխարհի վրա՝ նորից, հավիտյանս անհետանալուց առաջ» (271): Լեռան վեհաշուք տեսքն անհասկանալի զգացումով է պարուրում Մարկովին: Նրան թվում է՝ ինքն այդ սարի հետ մի միասնական էություն է, որ իր արյունը միշտ ճանաչել է այդ սարը. «Թեպետ Պոլ Ստեփանովիչը չգիտեր լեռան անունը, առաջ երբեք այն չէր տեսել, նրա հետ ծանոթ լինելու մի արտառոց զգացում համակեց նրան: Ասես ինքն այդ սարի հետ մի էություն լիներ, ասես նրանք միևնույն ոգով տոգորված լինեին՝ լեռը և մարդը, ասես նրանք նույն փորձություններով անցած լինեին: Երկուսն էլ միայնակ էին, երկուսն էլ՝ մեկուսացված Աստծու արարած մնացած ամեն ինչից. մարդը, ում Արարիչը վեր է դրել բոլոր մյուս արարածներից, և լեռը, որը վերևից նայում է երկրին: Երկուսն էլ իրենց առաքելությամբ դատապարտված էին միայնության: Երկուսն էլ, որովհետև մնացած արարչագործությունից վեր էին ու առանձնահատուկ, զգում էին այն բոլոր փոթորիկների ուժը, որ ավեկոծվում էր ու մոլեգնում տիեզերքի խռոչներում» (271): Այն, որ Մարկովը չգիտեր լեռան անունը, բայց այն նրան ծանոթ էր թվում, թերևս արտահայտում է այն գաղափարը, որ բոլոր մարդ արարածները, անկախ իրենց կրոնական պատկանելությունից և Աստծու գոյությունն ընդունելու կամ չընդունելու իրողությունից, անգիտակցորեն ապրում են աստվածային այն զգացողությունը, որը թելադրում է Արարատի վեհաշունչ տեսքը, լեռ, որն Աստծու գոյության ամենամեծ իրեղեն ապացույցն է:

Խոստովանենք, որ հայոց հավերժ գոյության խորհուրդը մարմնավորող սրբազան լեռան այս և գրոսբլոուսյան համանման պատկերներ համարձակ մրցակցության կարող են գնալ հայ և օտար արծակում Արարատին նվիրված լավագույն էջերի հետ:

Վեպի գլխավոր հերոսները՝ Անդվա Լայռլն իր հարյուրավոր որբերի և հայկական համայնքի մյուս անդամների ու Սիրանի հետ և Պոլ Մարկովը, անցնելով աշխարհում տիրող սարսափների միջով, հավաքվում են բիբլիական լեռան առջև: Աստվածային կամքի թելադրանքով լեռան ստորոտում գտնվող Բարձան գյուղում ստեղծում են Մանկական քաղաք, որտեղ հավաք-

վում են չորս հազար ութ երեխաներ: Հերոսներից յուրաքանչյուրը յուրովի է կապված սարին: Միսիոների համար Արարատը աստվածային խոստումն է՝ նրա սփոփիչը: Նա մշտական հաղորդակցության մեջ է սարի հետ: Նրա ծեռքերում Աստվածաշունչն է, իսկ հայացքում՝ մեծ սարը: Բարձանում ապրելու տարիներին Լայլի հոգին բազմիցս հանգիստ է առնում սարի զառամյալ, բայց անխոնջ ուսերին: Բոլոր այն իրավիճակներում, երբ Լայլը չի հասկանում իր անելիքը, հայացքն ուղղում է Արարատի բարձունքներին, և ամեն անգամ լեռը նկարագրվում է յուրովի՝ տվյալ իրավիճակի հաղորդած տրամադրությանը համապատասխան, բայց միշտ ակնածալից ու փառահեղ: Լեռան և Լայլի հարաբերությունները վեր են ածվում յուրօրինակ երկխոսության: Միսիոները դույզն իսկ չի կասկածում, որ բոլոր հարցերի պատասխանները հավերժական լռության մեջ միայնակ ընկղմված լեռան կնճիռներին են, և սովորաբար նման դեպքերում մանր թվացող որևէ դեպք է տեղի ունենում, որը Լայլին ցույց է տալիս դժվարությունից ելք գտնելու ուղին: Իսկ Պոլ Մարկովի համար Արարատն իր ուժերի վերագտնման և վերահաստատման խորհրդանշանն է: Հեղափոխությունը ջախջախել է նրա անհողդողդ հավատն իր անխորտակելի կամքի հզորության նկատմամբ, իսկ Արարատն իր խորհրդավորությամբ նրան կյանքի ուրիշ՝ ավելի մեծ նպատակ է ցույց տալիս՝ ընտանեկան սեր (նա սիրահարվում է Սիրանին, նրանք ամուսնանում են ու երեխա ունենում) և ստեղծագործ աշխատանք: Սիրանի համար Արարատն արդեն մի բան է, որը նրանից դուրս չէ, որպեսզի սահմանվի կամ բացատրվի, ինչպես յուրաքանչյուր հայ մարդու համար: Այն սկիզբն է ու վերջը: Միշտ եղել է և կլինի, ինչպես միշտ կլինեն քարը, աշխատանքը, տառապանքն ու հույսը: Ասել է թե՛ որպես Աստվածային կամքի խորհրդանշան՝ Արարատն իր ստորոտում հավաքում է բոլոր նրանց, ովքեր ընդունում են այդ կամքն ու ենթարկվում այդ կամքին, և ապա փրկում է նրանց ևս մեկ անգամ, երբ օգտվելով Հայաստանում տիրող անկայուն քաղաքական վիճակից՝ թուրքերը հարձակվում են Հայաստանի վրա: Մանկական քաղաքի բնակչությունը, Մարկովի, Սիրանի, Լայլի և հայ ֆիդայիների առաջնորդությամբ մեծ դժվարություններ հաղթահարելով, անցնում է Արաքսը և ապաստանում Արարատի լանջերին:

Էլջին Գրոսբլուսը վեպի վերջին էջում բացահայտում է մարդկությանը հուզող հարցի պատասխանը՝ գոյատևման գաղտնիքը. «Փրկությունը փոխադարձ երևույթ է՝ Աստծու Կամքի և մարդու կամքի միությունը մեկ միասնական նպատակի համար: Աստված մարդուն պարզել է իր սրբավայրը, բայց մարդ իր սեփական կամքով պիտի մտնի նրա խաղաղության մեջ: Աստծու թագավորությունը մոտ է, բայց բարի կամքի տեր մարդիկ պիտի կառուցեն նրա աշտարակներն ու մշակեն նրա պարտեզները» (429): Իսկ այն կամուրջը, որը մարդու կամքը միացնում է Աստծու կամքին, սերն է: Սերն է առեղծվածի գաղտնիքը և անմեկնելի առեղծվածն ինքը:

2. 6. Հայաստանի ընկալումը

«Արարատ» վեպում, եթե կարելի է այսպես ասել, հանրագիտարանային արտացոլում են գտել գրեթե այն բոլոր երևույթները, որոնք բնորոշ են եղել Հայաստանի սոցիալ-քաղաքական և տնտեսական կյանքին խնդրո առարկա ժամանակաշրջանում: Հայկական իրականության գեղարվեստական նկարագրության և հեղինակի կողմից դրանց որոշ մեկնաբանություններ այսօր կարող են տարակույսներ առաջացնել, բայց և այնպես անվիճելի է, որ սա միակ վեպն է, ուր անցյալ դարասկզբի Հայաստանի հանրային-քաղաքական կյանքը գեղարվեստական բազմակողմանի արտացոլում է գտել օտարերկրացի հեղինակի կողմից:

Ամերիկացի վիպասանի համար, հավանաբար, ամենատպավորիչ երևույթն իր տեսած Հայաստանում ամենուր սփռված ավերակներն են եղել, որոնց նկարագրությունը նրա համար դարձել է միջոց՝ արտահայտելու երկու իրողություն. նախ՝ դրանք վկայում են երկրի և քրիստոնեական հավատի հնադարյան պատմության մասին, ապա՝ ընթերցողին շատ պատկերավոր ցույց տալիս, թե ինչ է տեղի ունենում, երբ որևէ տեղով թուրք է անցնում:

Հայաստանի պատմական անցյալի մասին տեղեկությունները հեղինակը ներկայացնում է վիպական Դիլիջանի և Անիի ավերակների նկարագրությամբ: Չի կարելի ասել, թե այս նկարագրությունները համապատասխանում են մեզ հայտնի Դիլիջանում կամ Անիում գտնվող որևէ իրական ավերակի: Գրոսքլոուսը պարզապես Դիլիջանին և Անիին է վերագրել այն, ինչ ինքը տեսել է: «Մի ժամանակ Դիլիջանում հայկական մեծ տաճար էր եղել, - գրում է վիպասանը, - բայց Հայաստանի անկմանը զուգընթաց կործանվել էր, և այժմ մկրտության երկու ավազանի ջարդված բեկորներն էին միայն մնացել, որոնք դուրս էին ցցվել խեցեղենի և աղյուսի կտորների կույտի միջից: Մկրտության այս երկու ավազանը Հայաստանի հոգևոր պատմության լուռ վկաներ էին: Մեկը մարդաչափ երկարություն ուներ, պատրաստված էր կոպիտ բազալտից և ամուր էր, մյուսը մարմարյա էր, փոքր և արտառոց փորագրություններ ուներ՝ խորհրդանշական բազմաթիվ պատկերներով: Առաջինի մեջ ընկղմում էին մեծահասակ նորադարձերին, և այն պատրաստվել էր հնագույն ժամանակներում՝ եկեղեցու ամենավաղ օրերում, երբ ավետարանականությունը եռանդուն գործունեություն էր ծավալել, և նորադարձերը բազմաթիվ էին: Առաքելական ջերմեռանդության նվազման հետ եկեղեցու հեղինակությունը սահմանափակվել էր: Նորադարձները հազվադեպ էին, և արդեն ծնված օրից մարդ պատկանում էր եկեղեցուն: Մեծ ավազանն սկսել էին չօգտագործել, և քանի որ միայն նորաձիններն էին մկրտվում, ավելի փոքր, ավելի գեղեցիկ ավազան էր պատրաստվել» (13):

Դեռևս քսաներորդ դարասկզբին Գրոսքլոուսն ուշադրություն է դարձրել թուրքերի՝ իրենց զբաղեցրած հնադարյան հողի հարստությունների նկատմամբ ունեցած բարբարոս վերաբերմունքին. «Թուրքերը, որոնք համեմատաբար նորեկներ էին, հաշվի առնելով այդ երկրի հսկայական անցյալը, չէին տատանվում ավերակների քարերն օգտագործել որպես շինանյութ իրենց սեփական կառույցների համար» (17): Պատմական համառոտ է քսկուրսի միջոցով հեղինակը հղումներ է անում Հայաստանի փառավոր անցյալի մասին՝ հիշատակված բոլոր փաստերը վերագրելով Դիլիջանին: Վերջինս վեպում դառնում է Հայաստանի մշակութային-քրիստոնեական «կենտրոն», որի «մոտակայքից» է սերում Գրիգոր Լուսավորիչը, ինչպես նաև

թշնամիներին դիմակայող ամրոց. «Ըստ ավանդության՝ սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ հայերի առաքյալը, ծնվել է Դիլիջանի մոտակայքում: Երրորդ դարում Տրդատ թագավորը Դիլիջանը դարձրել է ուժեղ ամրոց, որը դիմադրել է հռոմեացիների բազմաթիվ հարձակումներին: Ավելի ուշ՝ Բագրատունյաց տոհմի թագավորության օրոք, դիմադրել է բյուզանդացիներին, որոնք, գործի դնելով իրենց ռազմավարական հնարամտությունները, ի վերջո տիրել են ամրոցին» (12),- գրում է հեղինակը:

Անիի ավերակների նկարագրությունը վկայում է, որ հեղինակն անձամբ չի այցելել Անի, բայց ընթերցողին Հայաստան երկրի հնադարյան լինելու հանգամանքը ևս մեկ անգամ հիշեցնելու համար կերտել է միստիցիզմով և ֆատալիզմով տոգորված մի պատկեր, որտեղ «նախահռոմեական» բառը շեշտում է երկրի անցյալը և ակնածանքի զգացողություն արթնացնում. «Արևելքում՝ դաշտավայրի դատարկության մեջ, պարզորոշ գծագրված քարերի մի մռայլ զանգված էր ցցվել, որի վրա այստեղ-այնտեղ ջարդված, միայնակ գմբեթ կամ քանդված պատ էր բարձրանում՝ այն ամենը, ինչ մնացել էր Հայաստանի հնագույն, հզոր մայրաքաղաքից: ...Արևմտյան կողմի վրա մի ուրիշ փլուզվող քարակույտ կար, որը, ասում էին, նախահռոմեական ժամանակների հունական բնակավայր էր: Երևի նույնիսկ էլ ավելի հին անցյալի ավերակներ լինեին հենց այն հողաթմբի տակ, որի վրա կանգնել էին, ավերակներ, որոնց տարերքը ողորմածաբար հողով ծածկել էր» (83):

Թուրքերի թողած ավերակների համառոտ, բայց ռեալիստական նկարագրությունները ներկայացնում են 1918-1919 թվականների Հայաստանի վիճակը, որտեղ անթաղ ոսկորները հանձնված էին արևի ողորմածությանը, իսկ ամբողջ երկրով մեկ փախստականների ճամբարներ էին սփռված. «Ինչ կրել էր Ռուսաստանը, Հայաստանը եռապատիկն էր կրել: Կայսերական բանակի կազմալուծումից հետո թուրքերը խուժել էին երկիր և կրկնելով 1895 թվականի սպանող՝ մորթել ու թալանել ամեն տեղ, որտեղով անցել էին: Թուրքերի առաջխաղացումը դադարել էր միայն Դանստերվիլի հրամանատարությամբ գործող բրիտանական զորագնդի սպառնալիքի տակ, որը Միջագետքից Պարսկաստանի վրայով մտել էր Հայաստան, իսկ թուրքական կառավարության հեղինակության անկումից և Մուդրոսի զինադադարից հետո թուրքերը նահանջել էին: Ահա այս արշավանքն էր ամայացրել ու ավերել երկիրը» (271): Կարսը կիսավեր վիճակում էր, քաղաքի շուրջն անբերրի ու դատարկ հողեր էին, ասես Դանտեի «սառնաշունչ քավարանը» լիներ: Մի ժամանակվա հարուստ շուկաներում այժմ առնետներ ու շներ էին վխտում, «երբեմն էլ այստեղ-այնտեղ վախեցած դեմքով որևէ վաճառական էր երևում՝ համարյա դատարկ ցուցափեղկի վրա կռացած: Թուրքական հարձակման ժամանակ գրեթե այն ամենը, ինչ ռազմական արժեք չէր ունեցել, ոչնչացվել էր: Իսկ երբ թուրքերը նահանջել էին, փորձել էին ոչնչացնել այն ամենը, ինչ ռազմական արժեք էր ունեցել: Բարեբախտաբար, այս նահանջը հապճեպ էր կատարվել, և ամրոցներն ու քաղաքի ռազմական շինությունները մնացել էին, թեպետև կողոպտված վիճակում» (286):

Վեպի առաջին իսկ էջերից Գրոսքլոուսը փորձում է ընթերցողին համոզիչ բացատրել, թե ինչու հայերը չփորձեցին դիմադրել չարին, և այդ նպատակով պատկերում է հայերի սոցիալա-

կան կյանքը: Ըստ հեղինակի՝ առաջին պատճառն այն է, որ «Դիլիջանի հայ բնակչությունը համախմբված համայնք չէր, ինչպիսիք հանդիպում են խառը բնակչությամբ այլ քաղաքներում: Հայկական թաղամաս կար, բայց այն միատարր չէր. խառնված էր թուրքերի տներին ու խաներին և, հետևաբար, չէր կարող որևէ կազմակերպված հարձակում դիմակայել: Բնակչությունը նույնպես միասնական չէր: Եղած համախմբվածությունն արտահայտվում էր պաստորի հետ նրանց սովորական կապերով» (12):

Դիլիջանի հայերն ապրում էին առօրյա հոգսերով: Չարը նրանց համար անհրապական գոյություն էր: Նրանք զբաղված էին առևտրով, որտեղ «հայը չէր վարանի հային կողոպտել», և տարբեր արհեստներով, և բնակչության բարեկեցիկ ու աշխատասեր մասն էին կազմում: Երբ թուրքերը բոլոր հայ տղամարդկանց շարում են պատի տակ, հրացաններն ուղղում նրանց վրա և կրակում, ոչ մի հայի մտքով չի անցնում դիմադրության փորձ իսկ անել: Ինչո՞ւ: Որովհետև նրանց մի պահ լքում է ապրել ցանկանալու կամքը: Որովհետև նրանց մարմիններն այդտեղ են, իսկ մտքերն իրենց ընտանիքների հոգսերի հետ: Որովհետև չնայած նրանք միմյանց ճանաչում են, իրար հետ չեն քննարկում, թե ինչ է կատարվում իրենց հետ, հազար հոգին, որ տասն անգամ գերազանցում է դահձի թվին, մեկ-մեկ են կանգնում հրացանների տակ: Նրանց մեջ միասնականություն չկա, իսկ համաձայնեցված որևէ գործողության մասին խոսք իսկ լինել չի կարող:

Երիտասարդ ամուսիններ Էմանուել և Մարիամ Վերյանների ընտանեկան կյանքի քննարկական նկարագրությամբ, այնուհետև նաև նրանց դստեր՝ Սիրանի կերպարի միջոցով Գրոսբլուսը թուրքական բարբարոսություններին և ընդհանրապես չարին հակադրում է այն արժեքները, որ հայկական մշակույթը ավանդել է համաշխարհային քաղաքակրթությանը և շարունակում է ավանդել անդուլորեն: Ըստ հեղինակի՝ ամերիկյան մշակույթը մարդկությանը տվել է ժողովրդավարության պարզև, որը նշանակում է հարզանք մարդկային արժանապատվության, անհատականության և այն աստվածային, ստեղծարար ոգու նկատմամբ, որը հատուկ է ամեն մի էակի, որքան էլ ցածր լինի նրա հասարակական դիրքը: Բայց հենց իրենց ժողովրդավարական անվանող ազգերն են պատերազմներ հրահրում, և որքան նրանք պատերազմում են, այնքան ավելի քիչ են ժողովրդավարական մնում, և դառնում են լավ կազմակերպված բացարձակ միապետություն: Հայերն աշխարհին տվել են յուրահատուկ ճարտարապետություն, որը «Արևմուտքը վաղուց ի վեր ընդօրինակում էր, և կատարելագործվել էր միջնադարյան գոթական ոճի մեջ, իսկ որդեգրված և կատարելագործված լինելով՝ դա պտուղ էր, որն ընկել էր ծառից» (145): Իսկ այն յուրահատուկ պարզև, որ հայկական մշակույթն ավանդել է աշխարհին, ընտանիքն է, այն սրբազան հարաբերությունները, որոնք գոյություն ունեն ամեն մի հայկական ավանդական ընտանիքում:

Վերոհիշյալ տեսարանում գրողը հանգում է մի շատ խորաթափանց եզրակացության, որը կարող է չնկատվել առաջին հայացքից. սկզբում թվարկում է այն երանությունները, որոնք առաջարկում է ժողովրդավարությունը տեսականորեն, այնուհետև մտորում, որ աշխարհը ժողովրդավարական բարձր գաղափարների անունից է վերածվում դժոխքի, ապա ըմբռնում է,

որ հայերը, դարեր շարունակ զրկված լինելով քաղաքական ազատություններից և ապավինելով իրենց հավատին, անկախ եկեղեցուն իրենց նվիրվածությունից, ստեղծում ու պահպանում են այն, ինչ ժողովրդավարություն կոչվածը քարոզում է և ավերում:

Գրոսբլոուսի այս գաղափարները մարմնավորող Մարիամ և Էմանուել Վերյանների ընտանիքը կործանվում է թուրքերի կազմակերպած սպանդի պատճառով, բայց նրանց դուստրը կենդանի է մնում և շարունակում հայկական ընտանիքի ավանդույթները: Ռուսական սարսափներից Մարկովը փրկվում է՝ ենթարկվելով Աստու կամքին, բայց նա այդ կամքն ըմբռնում է՝ ընդունելով Սիրանի առաջարկած հայկական ընտանիքի գաղափարը:

Վերյանների ընտանեկան պարզ, բայց կրքոտ հարաբերությունների նկարագրությունն արտացոլում է այն բարձր արժեքները, որոնք հատուկ են հայկական ընտանիքին, և որի ամենաբնորոշ տարրը սերն է: Այդ հատկանիշը վեպում պատկերված է սենտիմենտալության հասնող ռոմանտիկ երանգներով: Հազարավոր տիպիկ հայկական ընտանիքներից մեկի պատկերմամբ գրողը «սեր» հասկացությունը, որը նրա արժեքաբանական համակարգում ընդգրկում է նաև սերն առ Աստված, հակադրում է չարին՝ թուրքերի հրեշավոր եղեռնագործությամբ: Սերը պարտվում է, որովհետև հայերը ոչ թե ֆիզիկապես զիջում են թուրքերին կամ կռվելու կամք չունեն, այլ աշխարհում ստեղծված գոյաբանական պատերազմում հաղթանակը դեռևս չարինն է:

Մարիամը, իսկ այնուհետև նրա դուստրը ներկայացնում են կանացի առաքինության քրիստոնեական իդեալը, որի առջև խոնարհվում է նույնիսկ հարուստ ու հզոր Մուրադ բեյը, ով փրկում է Մարիամին և ապաստան տալիս իր հարեմի անանցանելի պատերից ներս: Մարիամի կյանքի այս շրջանի նկարագրությամբ հյուսվածքում ներմուծվում է դիպաշարային նոր գիծ. հեղինակը «Մուրադ բեյը» գլխում պատկերում է թուրքական հարեմը՝ տնտեսական, բարոյական և նույնիսկ քաղաքական բարդ մեխանիզմով՝ որպես պետություն պետության մեջ: Հարեմում տիրող մարդկային բարդ հարաբերությունները հակադրվում են Վերյանների պարզ, բայց ազատ ընտանեկան կյանքին, և թեպետ վերջիններիս ընտանիքը կուլ է գնում չարին, բարոյական հաղթանակն այնպես, ինչպես դա հասկանում է քրիստոնյան, իրենն է, որովհետև Մարիամը հրաժարվում է ընդունել Մուրադ բեյի առաջարկած սերը: Ամենակարող Մուրադ բեյի վերաբերմունքը հասարակ կառապանի կնոջ նկատմամբ մարմնավորում է հեղինակի աշխարհայացքը քրիստոնեական ազատության շնորհած առավելությունների վերաբերյալ:

Մարիամի հետագա կյանքի նկարագրությունը եղեռնը վերապրած այն բազմաթիվ հայ կանանց ճակատագիրն է, ովքեր երբեք չէին խոսում իրենց ապրած ողբերգության մասին, չէին փաթաթում իրենց ապրումներն ունկնդիրներին ու հարազատներին: Սիրելի ամուսնու մահից հետո նա իր երկրային գոյությունը կարողանում է ձգձգել ընդամենը ութ տարի, այն էլ՝ հանուն դստեր՝ Սիրանի, որին սիրում է «կեղեքիչ» սիրով, քանի որ նայում է նրան ու տեսնում ամուսնու պատկերը: Մարիամի կյանքը Բարձանում պատկերվում է որպես աստիճանական մարում, ինչպես «մթնշաղ, որը սիրում է ցերեկը, սակայն ողջունում է գիշերը և կամավոր ընկղմվում է նրա մեջ՝ խաղաղություն գտնելով նրա գրկում» (121): Առանց ամուսնու ապրելու

Մարիամի անկարողությունը հեղինակը համեմատում է այն զգացողության հետ, որ, հավանաբար, ապրել են գերեզման այցելած կանայք այն ժամանակ, երբ տեսել են, որ «քարը գլորել են և իրենց Տիրոջ մարմինը տարել: Նրանց եղբերզը մարդության համընդհանուր ձիչն է, մարդկություն, որը, վստահելով Աստծուն, չի ընկալում Նրա գործերի իմաստը. «Չգիտեմ, թե ուր դրին Նորան»» (122): Մարիամի աստիճանական մարման բանաստեղծական նկարագրությունն ընդհանրացնում է միլիոնավոր անմեղ հայ զոհերի ապրած ողբերգությունը:

Էլջին Գրոսբլոուսը հանգամանորեն պատկերում է կոտորածից փրկվածների ճակատագիրն Արևելյան Հայաստանում: Բարձանցիներին բազմաթիվ դժվարություններ հաղթահարելուց հետո ի վերջո հաջողվում է ստեղծել կայուն համայնք: Գյուղապետ Խանսուրյանի ղեկավարությամբ ստեղծվում են կենսական բոլոր կառույցները: Գյուղն ունի դպրոց, փոքրիկ եկեղեցի, գերեզմանոց, կոյուղի: Գյուղի տնտեսական կյանքը ղեկավարում է Նշան Քոլյանը, որը Դիլիջանում վաշխառու էր, իսկ Բարձանում օգնում է գյուղացիներին ցորեն աճեցնել: Գոյության առաջին տարիներին գյուղը բարգավաճում է ու ընդլայնվում, սակայն զարգացման ազդակներն աստիճանաբար սպառվում են, և համայնքի անդամներին համակում է մի ախտ, որը բնորոշ է թերևս բոլոր հայկական բնակավայրերին, և որը չի վրիպել ամերիկացի վիպասանի աչքից. համայնքն սկսում է մահանալ: Ոչ մի նոր բան գյուղում տեղի չի ունենում: Աննկատելիորեն այստեղ-այնտեղ հայտնվում են դատարկ տներ, նորոգման կարոտ պատեր ու փողոցներ և չմշակված դաշտեր... Ապա դատարկ շինությունները գնալով շատանում են: Տասը տարի անց բնակչության կեսը գյուղը լքում է: Մարդիկ գնում են քաղաք, որովհետև կյանքն այնտեղ ավելի հրապուրիչ է, աշխատանք գտնելու հնարավորությունները՝ ավելի շատ: Ի վերջո, թուրքական յաթաղանից փրկված համայնքը վերջնականապես քայքայվում է համեմատաբար բարենպաստ պայմաններում, դեռևս մինչև թուրքական երկրորդ սպառնալիքը: Քայքայման պատճառներից մեկը տնտեսական է. բնակիչները, նախկինում քաղաքաբնակ լինելով, նախապատվությունը տալիս են առևտրին և ցանկանում առևտրի կենտրոններին ավելի մոտ ապրել՝ գուցե և ապահովության նկատառումներով: Մյուս պատճառը քաղաքական է. ցարական կառավարության չինովնիկները հայերին հայկական հողում ապրելու պաշտոնական թույլտվություն այդպես էլ երբեք չեն տալիս: Գրոսբլոուսն այս միջադեպը նկարագրում է բավականին հանգամանորեն՝ գեղարվեստական ամբողջական նկարագրություն տալով ռուսական բյուրոկրատիայի գործելակերպին, կիրառելով քաղաքական սարկազմի ոճաբանական եղանակը:

Խիստ ուշագրավ է ռուսական և թուրքական տիրապետության դեմ դաշնակցության մղած պայքարի գրոսբլոուսյան մեկնաբանությունը: Արևելյան Հայաստանում հաստատվելու տասներորդ տարում Խանսուրյանն անդամագրվում է դաշնակցական կուսակցությանը, որն այդ ժամանակ ազգայնական գործունեության պատճառով անօրինական էր համարվում: Խանսուրյանին հրավիրում են մայրաքաղաք՝ ընդհատակյա գործունեություն ծավալելու: Նրա մեկնումն արագացնում է համայնքի քայքայումը: «Փիլիսոփայական հետազոտություն» գլխում գրողը Խանսուրյանի և Լայլի գրույցի ընթացքում ներկայացնում է դաշնակցության տեսակետ-

ներն ազատության, անկախության, հայրենասիրության և Հայաստանի ճակատագրի վերաբերյալ: Հեղինակի համոզմամբ՝ օտարերկրյա տիրապետողների դեմ պայքարել քաղաքական միջոցներով նշանակում է մարդկանց տանել անխուսափելի մահվան: Լայռլը վստահ է, որ ռուսների ու թուրքերի միջև տարբերությունը քիչ է. նրանք ռազմատենչ ազգեր են, որ ապավինում են ուժին, իսկ նման ասպարեզում մղված ցանկացած պայքարում ուժն է հաղթում. «Իսկ մենք, մենք ավելի լավ է վստահենք Տեր Աստծուն: Մեր թագավորությունը, ինչպես Հիսուս Քրիստոսն է ասել, այս աշխարհի չէ, քանզի դա այս աշխարհի իրականությունից վեր է» (138): Խանսուրյանի կերպարին վիպասանն այնուհետև անդրադառնում ևս մի քանի անգամ՝ այդպիսով գրեթե ամբողջական պատկերելով դաշնակցական կուսակցության գաղափարները, նպատակը, գործունեությունն անկախության տարիներին և ողբերգական վախճանը:

Բարձանի քայքայումը մոտենում է ավարտական փուլին, երբ գյուղը լքում է Նշան Քոլյանը՝ գյուղի ամենահարուստ մարդը, Ամերիկա գնալու նպատակով: Նա չի ուզում գնալ մայրաքաղաք, որովհետև «երիվանը քաղաքական գործիչների համար է, իսկ ես նրանց չեմ սիրում: Իհարկե, ավելի պատվաբեր է քաղաքական գործիչ լինել, քան առևտրական, բայց առևտրականը խաղաղության ձգտող մարդ է, մինչդեռ բոլոր այս քաղաքական գործիչները տաքզուլխներ են: Եթե նրանք իրենց կամքով գործեին, մեր ժողովրդի գլխին ավելի մեծ դժբախտություններ կբերեին: Աստված չանի, որ մի օր երկիրն ընկնի նրանց ձեռքը» (151):

1909-ին Բարձանում բնակվող վերջին բնակիչներն ստանում են երկար սպասված «թույլտվությունը»՝ հակիրճ հրաման հարթավայրն իննսուն օրվա ընթացքում ազատելու մասին: Ամբողջ տարածքը ռազմական գոտի էր հայտարարվել, որտեղից բոլոր օտարներն ու փոքրամասնությունները վտարվում էին: Բարձանում հիմնադրում էին հսկայական զինապահեստ, շտեմարաններ, զորանոցներ և վարժահրապարակներ: Վերջինը հեռացող հայերը հավատարմությունից չէ, որ մնացել էին Բարձանում, ոչ էլ այն հողի նկատմամբ սիրուց, որի վրա նոր տուն էին կառուցել, այլ որովհետև կան խիզախությունը, կան ուժը չէր հերիքել, որ ավելի շուտ հեռացած լինեին: Նրանցին մեկը Լայռլին է մեղադրում իրենց ձախորդության համար. «Վաղուց պիտի հեռանայինք: Պիտի իմանայինք, որ պաստոր Լայռլի խոստացած կանաչ արոտավայրերն ուրիշ տեղերում են: Բայց մնացինք, հուսացինք և վստահեցինք նրան» (156):

«Սա էր Դիլիջանի համայնքի պատմությունը, և, ըստ երևույթին, այսպիսին է եղել հայ ժողովրդի պատմությունը: Դանդաղ քայքայում, դանդաղ նվազում, դանդաղ մահացում, ինչպես բիզոնը՝ արևմուտքում...» (154),- ահա այսպիսի ճակատագրական եզրակացության է հանգում Էլջին Գրոսքլոուսը, երբ վերջին հայերը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով լքում են այն հողը, որը ապաստան էր տվել նրանց:

Հայկական համայնքի քայքայման տնտեսական և քաղաքական պատճառները նկարագրելով՝ հեղինակն արտահայտում է իր այն համոզմունքը, որ այս աշխարհում գործում է այնպիսի բարոյական միջավայր, որը չի նպաստում այն անհատի կատարյալ զարգացմանը, ով չի ապավինում բիրտ ուժին: Անկախության տարիներին մայրաքաղաք Երիվանում տիրող կարճատև խանդավառության, նոր կառավարության անդամների մեծ ծրագրերի և այդ ծրագրերի

անփառունակ տապալման գեղարվեստական նկարագրությունը գրողի համար ևս միջոց է ծառայում արտահայտելու իր տեսակետը բիրտ ուժի դեմ աշխարհիկ ձևերով պայքարելու անհնարինության մասին: Երիվանում, ինչպես Թիֆլիսում, «իրականության կարծի միջուկը պատսպարվել էր նոր խանդավառության պատյանում, իսկ թշվառությունն իր դեմքը ծածկել էր հույսի ամոթխած քողով»: Բանակն ու կառավարությունը պահվում էին դաշնակիցների տրամադրած վարկով, իսկ դաշնակիցների նպատակներն ու խոստումները լիովին չէին համապատասխանում հայերի անհրաժեշտություններին ու անվտանգությանը: Դաշնակիցներին պետք էր բուֆերային պետություն՝ կարմիր Ռուսաստանի ու ասիական զանգվածների միջև: Քանի որ դաշնակիցների նպատակները քաղաքական էին և ոչ թե մարդասիրական, նրանց նվերներից օգտվում էր միայն քաղաքի մի շրջանը, ուր աշխուժություն ու խանդավառություն էր տիրում: Այդ շրջանից դուրս սով էր, որ դանդաղ խորանում էր: Ոգևորված դաշնակից պետությունների և Միացյալ Նահանգների խոստումներից՝ նոր կառավարության նախարարները եռում են տնտեսական և ռազմական մեծ ձեռնարկումների առաջացրած ազնիվ, բայց ռոմանտիկ խանդավառությունից: Նրանք նույնիսկ պատրաստվում են ձեռք բերել Սև ծովի մի մասը և ռազմածովային նախարարություն բացել:

Էլջին Գրոսբլոուսը, դույզն-ինչ չկասկածելով հայերի անկեղծ հայրենասիրության վրա, ներկայացնում է նախկին ռուսական բանակի լեյտենանտ Ալեքսեյ Դոստինին՝ Մարկովի ընկերոջ տեսակետը հայերի մասին. «Հայերը կռվելուց բան չեն հասկանում: Կառավարելուց գլուխ չեն հանում: Քաղաքականության մեջ ընդունակություններ չունեն: Ինչպե՞ս կարող են կառավարելուց բան հասկանալ, եթե դարեր շարունակ իրենց սեփական կառավարությունը չեն ունեցել: Բայց թե ինչպե՞ս են կարողանում փող ստեղծել» (301): Գնդապետ Աջարյանը Մարկովին բացատրում է հայ զինվորի յուրահատկությունները. հայ զինվորը սովոր չէ զորանոցային կարգապահության, որովհետև հայերը երբեք զենք չեն կրել, և նրանց համար չի կարելի կիրառել այն կտրուկ միջոցները, որոնք սովորական երևույթ են ռուսական բանակում: Հայ գնդապետն ինքն այնպիսի տպավորություն է թողնում, թե ավելի հմուտ է մետաքսի և կտորեղենի հետ գործ ունենալու մեջ, քան հրացանների ու հրետանու» (304):

Այսօր արդեն կարելի է հաստատապես ասել, որ Գրոսբլոուսը շատ չի մեղանչել իրականության դեմ, երբ Հայաստանը նկարագրել է որպես մի երկիր, որտեղ միայն տեսություն է, այն, ինչ ցանկալի է, և ոչ թե այն, ինչ հնարավոր է անել գոյություն ունեցող միջոցներով¹⁸: Ղեկավարների անհեռատեսության հետևանքով մատակարարումները չեն բավարարում, «ուշանում են կամ սխալ տեղ ուղարկվում: Հրամանները փոփոխվում են կամ մնում թղթի վրա, շենքերի հիմքերը զցում են ու այդպես էլ թողնում: Սննդի ապահովումը ձախողվում է: Առողջապահական ծառայությունը տապալված է, հարկերը դրվել են, բայց չեն գանձվում, հասարակական ծառայողները աշխատավարձ չեն ստանում: Եվ արդյունքում, ամեն տեղ անհանգստություն է ու դժգոհություն» (385): Ահա այսպիսին էր Գրոսբլոուսի նկարագրած Հայաստանը սոցիալիստական հեղափոխության շեմին:

¹⁸ Տե՛ս Ալեքսանյան Կ., Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ., Երևան, 2012, 511 էջ:

«Արարատ» վեպում ընդարձակ նկարագրություն է ստացել փախստականների վիճակը, որին հեղինակն ականատես է եղել Ալեքսանդրապոլում անցկացրած մեկ-երկու ամիսների ընթացքում: Հայերի կյանքի ամենաողբերգական ժամանակահատվածներից մեկի գրոսբլոուսյան նկարագրությունը բնականաբար իրականության գեղարվեստական վերամշակում է, որով հեղինակն արտահայտել է փրկության մասին իր տեսակետը:

Ամովս Լայռլն իր միսիոներական գործունեության վերջին տասնամյակը նվիրում է Կարսում որբանոցներ բացելուն, որոնք այնուհետև Մարկոփի առաջարկով միավորվում են Բարձան գյուղում կառացված ռազմական բարաքներում և վերածվում մի ամբողջ մանկական քաղաքի, ուր ապրում են չորս հազար որբեր և Դիլիջանի ջարդերը վերապրած հայերի մի մասը: Եվ իսկապես, թուրքական սահմանի մոտ ցարական կառավարության կառուցած հսկայական զորանոցները, որոնք կոչվում էին Պոլիգոն, «Ամերիկյան կոմիտեի կովկասյան ճյուղի շտաբի փոխգնդապետ Չ. Տելֆորդի խնդրանքով, հանձնվում է ամերիկացիներին, որոնք էլ այն դարձնում են մեծ որբանոց, այստեղ կենտրոնացնելով մեծ թվով որբերի՝ այն վերածելով որբանոց քաղաքի»¹⁹: Ընդհանուր գծերով պահպանելով իրական փաստերը՝ Գրոսբլոուսն «աղավաղել» է մի հանգամանք, որը կարող է չընդունվել հայ իրականության կողմից: Իրականում գաղթականներին օգնություն ցույց տալու հարցը եղել է տեղական իշխանությունների և լայն հասարակության ուշադրության կենտրոնում և, հատկապես, ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսի, ում հովանավորությամբ 1914-ին ստեղծվել է «Ազգային հանձնաժողով՝ Ալեքսանդրապոլի գավառի թեմի առաջնորդական փոխանորդ Արտակ վարդապետ Սմբատյանի գլխավորությամբ»: 1915-1917 թվականներին քաղաքում արդեն գործում էին հասարակական և պետական տարբեր կառույցների կողմից բացված ութ որբանոց: Մինչև 1917-ը Ալեքսանդրապոլն ընդունում ու ճանապարհում է 85-95 հազար գաղթականների: Բուն Ալեքսանդրապոլում 1917-ին նրանց թիվը հասնում էր 25.754-ի: 1919-ի հունվարի տվյալներով՝ Ալեքսանդրապոլի գավառում ապաստանել էին 31.989 թուրքահայ և 2.372 ռուսահայ գաղթականներ²⁰: Հայաստանի նորաստեղծ կառավարության համար շուտով ակնհայտ է դառնում, որ, չնայած ջանքերին, հնարավոր չէ սեփական ուժերով լուծել օրեցօր ավելացող գաղթականության խնդիրները, և ծանր վիճակում գտնվող Հայաստանին օգնության ձեռք է մեկնում Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն: 1919-ի մայիսի 1-ին որբանոցները պաշտոնապես հանձնվում են Ամերկոմին, որի գործունեությունը շարունակվել է նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ մինչև 1931-ը:

Էլջին Գրոսբլոուսը, սակայն, Հայաստանում բացված որբանոցների նախաձեռնությունն ամբողջովին վերագրել է իր հոգևորական հերոսին՝ ամենակարող միսիոներ Ամովս Լայռլին, իսկ նրանց խնամատարության գործը՝ Մարկոփին՝ Աստվածային կամքի միջոցով փրկության հասնելու մասին իր գաղափարները ընդհանրացնելու նպատակով: Մեր կարծիքով՝ նա ոչ թե «խեղաթյուրել» է իրականությունը, այլ հենց իրականությունն է հուշել նրան իր գաղափարներն արտահայտել գեղարվեստական մթնոլորտ ստեղծելու միջոցով: Նախ՝ հայտնի է, որ հայ

¹⁹ Նույն տեղում, էջ 33:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 22:

փախստականներին սովամահությունից փրկելու գործում մեծ դեր են ունեցել նաև հոգևորականները, և հետո՝ Ամերկոմի գործունեությունն այդ տարիներին միսիոներական նպատակներ էր հետապնդում, որն էլ անհանգստացրել է Հայաստանի իշխանություններին: Այս երկու իրողություններն ակնհայտորեն թույլ են տվել ամերիկացի վիպասանին գեղարվեստական վերացարկման միջոցով նպաստամատույց ամբողջ գործողությունները պատկերել Լայռլի, ապա՝ Մարկովի գործունեության միջոցով: Երկու հերոսների ամերիկացի և ռուս լինելու հանգամանքը գրոսբլուուսյան փրկության գաղափարը տարածում է ամբողջ մարդկության վրա: Վիպական որբանոց-քաղաքում, որի կառուցվածքի և կազմակերպչական կարգի գեղարվեստական նկարագրությունն ընդհանուր գծերով համապատասխանում է իրականությանը, միսիոներների ու պետական գործիչների վարած խճճված քաղաքականությունն իր տեղը զիջել է վիպասանի գոյաբանական փիլիսոփայությանը՝ էքզիստենցիալիզմին:

Լայռլի և Մարկովի ստեղծած Մանկական քաղաքում հաստատված կարգի նկարագրությունը մարդկային համայնքի այն իդեալական կառուցվածքն է, որն արձակագիրն առաջարկում է կործանման եզրին գտնվող մարդկությանը: Ճիշտ է, այդ ուտոպիական կառույցը, որպես այդպիսին, նույնպես կործանվում է, բայց անհատները փրկվում են, որովհետև Գրոսբլուուսը, այնուամենայնիվ, իրատեսորեն է դատում ժամանակի նշանների մասին:

Գրոսբլուուսն արհավիրքից փրկության իր մեխանիզմում չի անտեսել նաև չարի դեմ զենքի ուժով պայքարելու եղանակը, որը վեպում մարմնավորում է ստացել Հայկի և Դրոյի կերպարների միջոցով: Պատանի Հայկը հինգ տարի Լայռլի հետ ապրելուց հետո լքում է նրան և միանում Դրոյին, որի միայն անունն է հիշեցնում Դրաստամատ Կանայանին: Դրոյի մարդիկ իրենց ընտանիքների հետ քոչվոր ֆիդայիների կյանքով են ապրում. ամռանը՝ Արարատի լանջերին, որի պահապան պատերի մեջ նրանց չեն հետապնդում «ո՛չ ցարի ուկազը, ո՛չ էլ սուլթանի» կամքը, ձմռանը՝ պարսկական լեռներում (365): Տղամարդկանց հիմնական զբաղմունքներից մեկը թշնամուն հետապնդելն ու կոտորելն է: Թուրքերի երկրորդ հարձակման ժամանակ՝ Դրոյի մահից հետո, ջոկատի առաջնորդ դարձած Հայկն իր մարդկանց հետ օգնում է Լայռլին՝ երեխաներին անցկացնել Արաքս գետը և հասցնել Արարատին:

Չի կարելի ասել, թե դիպաշարային այս գիծը նպատակաուղղված է քիչ թե շատ ռեալ պատկերացում տալու ժամանակի հայկական ազատագրական շարժման մասին: Այն ավելի շուտ պատկերված է որպես այն միջոցներից մեկը, որով մարդ ընդհանրապես պայքարում է չարի դեմ՝ «Ակն ընդ ական, ատամ ընդ ատաման»: Եվ չնայած հեղինակը չի ընդունում այդ միջոցը (Լայռլը՝ հեղինակային մտադրությունների հիմնական արտահայտիչը, հանդիմանում է Հայկին՝ թուրքի դեմ զենք վերցնելու համար, և գտնում, որ այն արդարացում չունի)՝ հեղինակն ինքնին իր գաղափարներին հակասում է, որովհետև նաև Հայկն ու իր զինված մարդիկ են նպաստում, որ հայերը խուսափեն թուրքական երկրորդ կոտորածից:

2. 7. Հայկական համայնքի առաջնորդները

Հայկական համայնքի հոգևոր առաջնորդը Անուպա Լայըլն է՝ «բարձրահասակ, անճոռնի, քառասունհինգ տարեկան մի տեխասցի, ում արտաքինը և վարվելակերպը չէին հուշում, թե աղետի և փոթորկի միջոցին նա կկարողանար հոտին հովվություն անել: Անուպա Լայըլն այն աստվածավախ, խանդավառվող, հուսավառ առաքյալներից էր, որոնք իրականության մասին պատկերացում չունեն, կազմակերպման և ղեկավարման կարողություն չունեն, ուրիշ աշխարհից են, ավելի շատ տարված են անհատով, քան հասարակությամբ, ավելի շատ՝ ոչխարով, քան՝ հոտով» (13): Լայըլը ժամանակին Տեխասի տափաստաններում կովարած էր եղել: Նա չէր սիրում կազմակերպված կյանք և չէր ըմբռնում, թե ինչ բան է կազմակերպված հասարակություն ասածը: Ահա նրան ինչպես է ներկայացնում վիպասանը. «Արոտավայրն ամբիոնի, սանձն Աստվածաշնչի հետ փոխելուց հետո էլ այս հակակրանքը չէր վերացել, այլ ավելի էր ընդգծվել: Նախապատվությունն այն բանի նկատմամբ, ինչը նա սիրում էր համարել հոգու անցանկապատ արոտավայր, տարածվում էր նրա անձնական գործերից մինչև հասարակության վերաբերյալ նրա գաղափարների և, որպես քրիստոնյա առաքյալ, նրա պարտավորությունների վրա: Ղա երևում էր նրա բացարձակ անհեռատեսությունից, ըստ անհեռատեսություն բառի հանրածանոթ ընկալման: Ամեն մի օր նա ապրում էր այնպես, ասես նրա վերջին օրը լիներ: Ղա երևում էր նրա հագուստից, որն աննկարագրելի էր, և որի միակ տուրքն ունայնությանը՝ քրքրված, լայնեզր գլխարկն էր, որ դնում էր արդեն տասներեք տարի, և տեխասյան աստղազարդ երկարաձիտ կոշիկները, որ հագնում էր տոնական օրերին, դա ակնառու էր նրա սննդից, կացարանից ու հոգսերից: Նա ուտում էր, երբ պահարանում հաց կար, իսկ երբ ոչինչ չէր լինում, պաս էր պահում» (20):

Ահա այսպիսի մի խենթ միսիոներ՝ օրըստօրե աճող, ոչնչից սնվող խանդավառությամբ, զբաղվում էր Ղիլիջանի հայ և թուրք բնակչությունից Հիսուս Քրիստոսի համար հոգիներ նվաճելու գործով: Նրա գործը հեշտանում էր նրանով, որ հայերը քրիստոնյա էին, բայց որքան Լայըլը քարոզում էր, այնքան միսիոներների սկսած գործը տապալվում էր, իսկ միսիոներների հիմնած հաստատությունները կամաց-կամաց քայքայվում էին:

Լայըլի կերպարն ստեղծելիս Գրոսքլոուսն օգտագործել է միսիոներների գործունեության մասին իր բավականին հարուստ փորձը Պարսկաստանում և Հայաստանում: Այն, որ միսիոներությունն ընդհանրապես անկում էր ապրում, հեղինակին անհանգստացնող խնդիրներից մեկն էր: «Արարատ» վեպի այն մի քանի էջերը, որոնք պատկերում են միսիոներական ավանի անմխիթար վիճակն ու նրա հոգևոր հովիվ Լայըլի անհեռատես առաքելությունը, ներկայացնում են ամերիկյան միսիոներության վիճակն Արևելքում ընդհանրապես, որին հեղինակն անդրադարձել է նաև տարբեր պարբերականներում տպագրված մի շարք հոդվածներում: Իսկ այն, որ Լայըլը նկարագրվում է ոչ պակաս, ոչ ավել, քան՝ ինչպես խենթ, կարելի է բացատրել տարբեր տեսանկյուններից: Գրոսքլոուսի «Օլիմպիա» վեպի²¹ Ոսկեբերանի պես Լայըլը ներկայացնում է մարգարեների և ավետարանիչների ընդհանուր նախատիպը՝ մարդիկ, ովքեր այնքան են տարված մարդկանց հոգիները փրկելով, որ չեն նկատում ռեալ իրականության

²¹ Տե՛ս **Groseclose E.**, Olympia; Ontario; 1980; 248 p.

պահանջած պայմանականությունները: Նրանք ապրում են միայն հոգևոր սննդով: Կյանքի նյութական կողմը նրանց չի հետաքրքրում: Եվ նման մարդիկ անհավատալի հաջողությունների են հասնում, որը նման է հրաշքի: Լայլըն այնուհետև մահացող միսիոներական խանդավառության վերջին ներկայացուցիչներից է: Նա նախախնամության կամքով գործում է այնպիսի հանգամանքներում, որոնց միայն խենթը կարող է դիմանալ և ոչ միայն դիմանալ, այլև առանց երբևէ տարակուսելու հավատալ, թե նման պայմաններում հնարավոր է փրկության հույս տեսնել:

Լայլի օրեցօր աճող խանդավառությունն ըստ երևույթին ամերիկացու պատմական հիշողության բացակայության արդյունք է: Բնորոշ է նրա վերաբերմունքը պատմության նկատմամբ. «Այն միտքը, որ ինքն ապրում է մի երկրում, որտեղից այդքան շատ պատմություն է սկիզբ առել, հատկապես այդքան շատ բիբլիական պատմություն, և որտեղ մարդկային այդքան բազմաթիվ սերունդներ են ապրել և իրենց ավանդը ներդրել կյանքի ընթացքին, խանդավառում էր նրան: Սակայն, ընդհանրապես, պատմության նկատմամբ նա քիչ ակնածանք ուներ: Ավերակները նրան չէին սարսափեցնում կամ տխրեցնում: Նրա և թուրքերի վերաբերմունքն անցյալին գրեթե միատեսակ էր. թուրքերը, որոնք համեմատաբար նորեկներ էին՝ հաշվի առնելով այդ երկրի հսկայական անցյալը, չէին տատանվում ավերակների քարերն օգտագործել որպես շինանյութ իրենց սեփական կառույցների համար: Լայլի տեսադաշտը երկար էր, բայց դեպի առաջ էր ուղղված, ոչ՝ դեպի ետ, դեպի ապագան, ոչ՝ դեպի անցյալը: Լայլի համար անցյալն ընդամենը կարծր, պինդ ժայռ էր, որի մեջ մարդ պիտի հիմք փորեր աշտարակ կառուցելու նպատակով: Անցյալի մասին նրա կարդացած բոլոր տարեգրությունները մեն-մի ուղերձ էին հղել նրան. այն է՝ Աստծու կամքը մարդու կամքի միջոցով աստիճանաբար դարձել է գերագույն» (17):

Լայլի խանդավառությունը հակադրվում է իրական կյանքում հասունացող վտանգավոր զարգացումներին, որոնք նա ուղղակի չի նկատում, իսկ երբ ավելի շրջահայաց թուրքերն ուզում են նրա աչքերը բացել և ցույց տալ ժամանակի նշանները, չի ցանկանում հավատալ, որովհետև այն իրականությունը, որտեղ նա սովորաբար ապրում է, նրա համար շատ ավելի իրական է: Եվ, այնուհանդերձ, այսպիսի մի անմխիթար թվացող մարդու հաջողվում է իրականացնել անհնարին մի ծրագիր. նախ՝ թուրքական ջարդից կենդանի մնացած հայերին, թվով երկու հազար հոգուց ավելի, ապաստան է տալիս միսիոներական ավանում և ապա՝ հանգստացնում վախից կիսախելագար այդ մարդկանց, մարդիկ, որոնք դժոխային տեսիլների մեջ կարող էին անգամ սպանել միմյանց: Լայլըն այս տեսարանում հանդես է գալիս ինչպես հին ժամանակների ավետարանիչ: Նա չի բորբոքում հավաքվածների զգացմունքերը, այլ կոչ է անում գոհանալ և փառք տալ Աստծուն իրենց զարմանահրաշ փրկության համար. «Գոհացե՛ք Տէրիցը, որ բարի է. որ յաւիտեան է նորա ողորմութիւնը» (49): Եվ այստեղ, և՛ հետագա բոլոր դրվագներում հեղինակի միտումը նույնն է՝ ընթերցողին ցույց տալ, որ ամեն տեսակի փորձությունից փրկվում են միայն նրանք, ովքեր իրենց կամքը ենթարկում են գերագույն կամքին:

Այսպիսով, Լայռը պատկերվում է որպես խանդավառ միսիոներ, որի նվիրվածությունը հասնում է խենթության: Սառը տրամաբանությունն ու առողջ դատողությունը նրա համար խորթ հասկացություններ են: Նրա կարծիքով՝ տրամաբանություն չի պահանջվում այն մարդուց, ում հայացքն ուղղված է երկնքին: Միակ բանը, որ նրան հետաքրքրում է, հոգու փրկությունն է: Դա նրա գործունեության անկյունաքարն է: Այսպես, կապիտան Մարկովի հետ ծանոթության առաջին իսկ րոպեին Լայռը նրան ուղղում է իր համար սովորական, իսկ աշխարհիկ խնդիրների բեռան տակ կքած մահկանացուի համար տաղտկալի հարցն այն մասին, թե արդյոք նրա հոգին փրկված է, այնուհետև, կամա թե ակամա, իրեն ապավինող բոլոր անհատներին երբեք չթուլացող խանդավառությամբ փրկում է արհավիրքներից և տանում դեպի փրկություն: Թուրքական երկրորդ սպառնալիքի ժամանակ, երբ երկրի վրա հայերի համար այլևս ոչ մի ապահով վայր չի մնում, փրկության միակ հանգրվանը դառնում է Արարատ լեռը: Իհարկե, իրականում չորս հազար որբ երեխաների Արարատ տանելու նպատակը նրանց Պարսկաստան հասցնելն է, բայց լեռան միջոցով փրկվելն ունի փոխաբերական նշանակություն՝ հնազանդություն Աստծու կամքին: Չարենցյան խոսքով՝ «դեպի լյառն Մասիս» բարձրացող մարդկանց շարքերի պատկերն անխուսափելիորեն հիշեցնում է բիբլիական սարից իջնող Նահապետի ոգեղեն տեսիլքը և նոր կյանքի ու նոր մարդկային հարաբերությունների խոստումը:

Լայռն իրականացնում է գերագույն կամքի նպատակը: Այդ դժվարագույն հանձնարարության իրագործման ճանապարհին նա բազմիցս բախվում է իրականության հետ, որտեղ գործող, գիտական համարվող տրամաբանության սկզբունքներին հակառակ, նա շարունակում է երանելիորեն ապրել՝ կեսարի գործերին չմիջամտելու սկզբունքը վարվելակերպ դարձրած: Սակայն թուրքական, իսկ այնուհետև նաև ռուսական լծի տակ գոյատևող հայկական համայնքի հոգևոր հովիվը դժվար թե կարողանար հոտին հովվություն անել առանց կեսարի գործերի հետ բախվելու: Առաջին բախումը տեղի է ունենում, երբ Լայռը մի հասարակ թուրք գյուղացու հորդորներով հոգևորականի իրավունքով դիմում է գյուղապետին, ապա՝ ռազմական հրամանատար Հաշիմ Ֆարուքին և հաշիվ պահանջում հայերի դեմ պատրաստվող հաշվեհարդարի վերաբերյալ: Պերճախոս Լայռը ոչ մի բառ չի գտնում, որպեսզի կարողանա հակաճառել Ֆարուքի՝ հայերի հասցեին արած մեղադրանքների տարափին, և հեռանում է վերահաս ողբերգության գիտակցությամբ: Բայց Աստվածաշունչն այս անգամ էլ է նրան օգնության հասնում: Սկզբում «նրան թվում էր, թե թափահարվող թևերի ձայներ էր լսում, թե երկինքը բացվել էր, և Հայտնության չորս հրեշտակներն արշավում էին դեպի Դիլիջան՝ աղետի իրենց հանդերձները հագած»: Սակայն շուտով «հուսահատության տրամադրությունն անհետացավ, չորս ձիավորները, որոնք մի կարճ պահ լցրել էին նրա մտապատկերը, անցան-գնացին, և նրանց փոխարեն, նրան թվաց, թե տեսավ Աստծու դեմքը, որը ոչ մի բանի այնքան նման չէր, որքան անամպ երկնքին և օրհնյալ արևին, և նրա կորովը վերադարձավ» (30):

Իրականության հետ երկրորդ խոշոր բախումը է տեղի է ունենում, երբ Արաքս գետը հրաշքով անցնելուց հետո հայկական համայնքի մնացորդները բնակություն են հաստատում Բարձանի առջև: Նույնիսկ ավերակների վերածված գյուղում ապրելու համար հայերը պիտի

ստանալին Նորին մեծություն ցարի *ուկագը*: Բացի այդ՝ նրանք թույլ ու աղքատ էին, չգիտեին ինչպես կազմակերպել իրենց կյանքն անկախության պայմաններում, իսկ Լայռլն ամենաանհամապատասխան մարդն էր նման վիճակում ճիշտ որոշումներ կայացնելու համար:

Հաջորդ խոշոր բախումը իրականության հետ տեղի է ունենում, երբ Կարսում՝ Լայռլի հիմնած որբանոցում, անտեր ու անտուն երեխաների թիվը կամաց-կամաց մեծանում է, իսկ միսիոները բնավ չի մտահոգվում, թե ով և ինչպես պիտի կազմակերպի այդ երեխաներին սնելու և խնամելու հարցը, որովհետև վստահ է, որ եթե ինքը չկարողանա նրանց կերակրել, Աստված կսատարի իրեն: Եվ Լայռլի քարոզչությունը հաղթական ավարտ է ստանում. նրան հաջողվում է իրեն ապավինած որբերին և 1896-ին թուրքերից ազատված հայերի մի մասին երկրորդ անգամ առաջնորդել դեպի փրկություն:

Աստվածային կամքին ենթարկվելու ճանապարհով փրկության հասնելու իր համոզմունքին ավելի ընդգրկուն հնչողություն տալու համար Գրոսքլոուսը ներկայացնում է 20-րդ դարի սկզբի ռուսական հասարակության երկու սերնդի ներկայացուցիչների՝ Ստեփան Միխայլովիչ Մարկովի և նրա որդու՝ Պավել (Պոլ) Ստեպանովիչ Մարկովի կյանքի և գործունեության բավականին մանրակրկիտ նկարագիրը:

Գնդապետ Մարկովը սերում է մի տոհմից, որն ավելի հաջողակ էր մարդկությունը ոչնչացնելու, քան լույս աշխարհի բերելու գործում: Այդ տոհմի ժառանգներն ավելի հմտորեն ձակատամարտի են գնացել, քան կանանց սիրահետել: Նա տոհմական կալվածք ունի Վարսովայում, որտեղ ապրում էին նրա միայնակ կինն ու որդին, և որոնց այցելում էր միայն տոներին: Իր կյանքի մեծ մասն անց էր կացնում՝ «ռազմական շեփորի և թմբուկի կանչի տակ իր պարտականությունները կատարելով» (80): Եթե Լայռլի համար հավատը և խորհուրդը կենտրոնանում են Արարատի վրա, Մարկովի համար Արարատը բիբլիական լեռ է, որը նա կցանկանար բարձրանալ և ոտքերը խրել նրա հավերժական ծյուների մեջ և աշխարհին նայել Լայռլի ասած խորհրդի սրտից, որպեսզի հաստատեր իր պրոմեթևայան անկոտրում ոգին: Այնուամենայնիվ, Մարկովը հետաքրքրությամբ է լսում Լայռլի մտքերը «մեղքի մեջ ապրելու, մեղավոր և մոլորված» լինելու մասին: Գնդապետն առաջնորդում է կազակների ջոկատը՝ Բաքվում հայերի դեմ կազմակերպված ընդվզումները ճնշելու համար: Երբ մոլեռանդ ամբոխը «ջեհադ» գոռալով առաջանում է, Մարկովը կրակելու հրաման տալու փոխարեն ծիուց իջնում է և մոտենում նրանց առաջնորդին՝ բանակցելու նպատակով: Սակայն ցարական բանակի անվեհեր գնդապետը ճիշտ վայր չէր ընտրել քրիստոնեական սիրո օրինակ ցույց տալու համար. արյունահեղությունը կանխելու ազնիվ միտումը խլում է նրա կյանքը: Այս միջադեպն ուղղակիորեն ներկայացնում է հեղինակի բարոյախոսությունը. գնդապետը թեև մի տեսակ հեզմանքով է ընդունում Լայռլի ցույց տված կյանքի ճանապարհը, այնուամենայնիվ սահմանային իրադրության մեջ ընտրում է հենց այդ ուղին:

Պավել Մարկովը, ինչպես և իր հայրը, ներկայացնում է Գրոսքլոուսի հերոսների այն շարքը, որն անցնում է բարոյահոգեբանական պայքարի միջով և կանգնում ընտրության առջև: Նա ստացել է իր ժամանակին բնորոշ ազնվականական դաստիարակություն: Անցնելով Սոցիա-

լիստական հեղափոխության թոհուբոհի միջով՝ ըմբռնում է, որ ինքը հետևել է կեղծ արժեքների: Հեղափոխության հռետորի ոգեշունչ ճառը վերջնականապես բացում է Մարկովի աչքերը: Նրա ուղեղը հանկարծ լուսավորվում է, և նա հասկանում է, որ մոր ազդեցությունը թողնելուց ի վեր կանգնած է եղել կործանման եզրին: Երիտասարդն ըմբռնում է իր դրության երկակիությունը՝ հեղափոխությունն ընդունել չէր կարող. նախ՝ այն անհամատեղելի էր իր խառնվածքի հետ, բացի այդ՝ նրան չէին հարցնում՝ ընդունում է, թե ոչ. նա ժողովրդի թշնամի էր: Չէր էլ կարող մերժել հեղափոխության գաղափարները, որովհետև դրանք այն նույն բանական հիմնավորումներն էին, որոնք մինչ այդ ընդունել էր անվերապահորեն: Բարոյական այս երկակի պայքարից դեռ ելք չգտած՝ Մարկովը հայտնվում է խորհրդային բանտում, որի նպատակը ժողովրդի թշնամիների ապրելու և պայքարելու վճռականությունը կոտրելն էր: Մարկովը նկարագրվում է որպես հիրավի ուժեղ կամքի տեր անձնավորություն, ով փորձում է իշխել ճակատագրի վրա՝ իր կարողությունները և կամքը վիթխարի ճիգերով լարելով: Եվ հանգամանքները դասավորվում են այնպես, որ նրան հաջողվում է անել անհավատալի՝ բանտապետի քթի տակից փախչել:

Այսպիսով, Գրոսբլոուսի վերափոխվող հերոսը, անցնելով անասելի դժվարությունների միջով, գիտակցում է իր հին իդեալների սնանկությունը: Գոյը ընդունում է իր օտարացումն աշխարհից, ըմբռնում է, որ ինքը միանգամայն տարբեր է այդ աշխարհից: Սկսվում է նրա կերպարի զարգացման երկրորդ փուլը՝ նա պետք է ձեռք բերի նոր իդեալներ: Այս փուլի իրադարձություններն աստիճանական զարգացում են ունենում: «Օլիմպիա» վեպում Փրոբուսը, որը նույնպես հոգեկան տևական տվայտանքներից հետո կյանքի իմաստը չի տեսնում, վիպական գործողությունների հենց սկզբում հանդիպում է Օլիմպիային ու անմիջապես հասկանում, որ նա հենց այն կինն է, ում համար արժի ապրել: Մարկովի վերափոխման փուլն ավելի դրամատիկ է, որի ընթացքում բացահայտվում են նրա խառնվածքի բոլոր դրական գծերը և ավելի համոզիչ դարձնում վերափոխման հնարավորությունը: Այս առումով ամենակարևոր իրադարձությունը, որն ընթերցողին հուշում է, թե նա ընդունակ է ենթարկվել Բարձրյալի կամքին, Արարատ լեռան հետ նրա առաջին «հանդիպումն» է, որի ժամանակ նա անգիտակցորեն զգում է իր արյան կանչը: Երկրորդ կարևոր դեպքը բնութագրում է Մարկովի խառնվածքը: Չնայած նրա աշխարհայացքում «կարեկցություն» կոչվող մարդկային զգացմունքը տեղ չուներ, իսկ ընտանիք կազմելու և երեխաներ լույս աշխարհ բերելու մարդկային սովորական «ավանդույթը» խիզախություն էր, որը ենթադրում էր պատասխանատվություն ու սարսափեցնում ինքնաբավ Մարկովին, երկաթուղու կայարաններից մեկում պատահաբար հանդիպած երկու որբ երեխաներ այնպիսի կարեկցություն և քնքուշ զգացմունքներ են անսպասելիորեն առաջացնում նրա սրտում, որ նա նրանց նստեցնում է գնացք: Այդ անտեր երեխաները բնականաբար հոգատարություն են պահանջում, որը Մարկովը, ինքն իր վրա զարմանալով, ապահովում է հնարավորինս: Եվ որքան էլ նրա համար անսպասելի, ապահովության կարիք ունեցող այդ երեխաներն ստիպում են նրան մտածել իր իսկ ապահովության ու խաղաղության մասին: Նա հանկարծ ընկալում է, որ այդ անկարգ ու դատարկ աշխարհում իր մեջ նույնպես ինչ-որ ապահովության

և կայուն խաղաղության ցանկություն է առաջանում: Այդ ցանկության ծայրն այս փուլում նա անմիջապես լռեցնում է, որովհետև դեռևս մտածում է, թե ինքն իր ճակատագրի տերն է և կարող է բավարարել իր բոլոր կարիքները: Այնուհետև Մարկովը, ինքն էլ չհասկանալով՝ ինչպես, սկսում է կատարել Աստծու կամքը: Նախ՝ երկու որբերին հասցնում է Կարս՝ հանձնելու Լայռլի խնամքին, որի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ ցնցվում է. միսիոները գաղափար չունենալով՝ ինչ բան է ողբերգությունը, լինի դա անձնական թե հասարակական: Այդ հասկացությունը նրա համար գոյություն չունենա: Մարկովին զարմացնում է, որ այն ողբերգական իրադարձությունները, որոնց միջով այդ մարդն անցել էր, ոչ մի կործանարար ազդեցություն չէին թողել նրա վրա: Նմանատիպ ողբերգական դեպքեր իրեն դարձրել էին միմյուրից. նա այլևս չէր հավատում Ռուսաստանի ապագային. «Աշխարհը մեռնում է: Ամեն ինչ մեռնում է: Եթե այս երեխաները փրկվեն, ապա միայն իրենց ուժերի ծաղկման շրջանում սպանվելու համար» (292):

Հանգամանքները դասավորվում են այնպես, որ Մարկովի երկրորդ այցը Լայռլի մանկատուն ճակատագրական դեր է կատարում նրա կյանքում: Տեղի են ունենում դեպքեր, որոնց պատճառով նրա մեկնումն անընդհատ հետաձգվում է: Ի վերջո, նա ինքն է մնալու պատճառներ որոնում և սովորաբար գտնում է այդպիսիք, որովհետև չի ցանկանում ընդունել իրական պատճառը: Նրա մեծապետական գաղափարները, թեպետ արդեն խարխլված, դեռևս այնքան հզոր են, որ նա նույնիսկ ինքն իրեն չի ցանկանում խոստովանել, որ իր մեջ արթնանում են մարդկային բնական զգացմունքներ՝ սեր, խաղաղ անկյուն ունենալու բնական ցանկություն: Մարկովը մնում է Կարսում և սկսում աստիճանաբար կարգուկանոն հաստատել: Նա ստանձնում է երեխաներին կերակրելու, հագցնելու և ապաստանելու գործի կառավարումը, ինչն իրականացնում է պատասխանատվության բարձր զգացողությամբ: Համոզում է Լայռլին Կարսի տարբեր մասերում ցրված տներից երեխաներին տանել ցարական բանակի կողմից Բարձանում կառուցված ռազմական ընդարձակ գորանոցները, որը հնարավորություն է տալիս ավելի շատ որբեր խնամելու: Լավ զինվորին հատուկ կարգապահությամբ նա Սիրանի և Լայռլի հետ ստեղծում է իսկական քաղաք, որի հիմնական բնակիչները երեխաներ են: Սա մի յուրահատուկ կառույց է, որի նպատակը ոչ թե տարիքի քնահաճույքներն իրականացնելն է և ունայնությունն ու թախիծը փարատելը, այլ անբիծ, անարատ և աստվածային ոգով լի մանուկներին ուրախություն ու ապահովություն պարգևելը: Լայռլի կրոնական սկզբունքների և Մարկովի կազմակերպչական ձիրքի արդյունք այս քաղաքում ուրախությունը և երջանկությունը համատարած են...

Պատկերելով Մանկական քաղաքի գործունեության մեխանիզմը՝ Գրոսբլոուսն առաջարկում է իդեալական համայնքի իր գեղարվեստական տարբերակը: Այս քաղաքում երեխաների հետ վարվում են այնպես, ինչպես հավասարը՝ հավասարի: Չորս հազար որբերը սոսկ փոթորկից խուսափված երեխաներ չեն, այլ հարյուրավոր անհատներ՝ իրենց պատմությամբ, իրենց շնորհներով և սեփական ուղեծրով, որը նույնքան փառահեղ է, որքան՝ աստղինը: Մարկովը բավարարվածության իսկական բերկրանք է ապրում՝ Սիրանի հետ շրջելով իրենց ստեղծած Մանկական քաղաքում, սակայն նրա հոգին պարուրած բավարարվածությունը լիակատար չէ:

Իր կյանքում երեք անգամ նա հայտնվել էր սահմանային իրադրություններում: Առաջինն իր զորագնդի խռովությունն էր, որի ժամանակ վախը տիրել էր նրա բոլոր մյուս զգայություններին և ստիպել փախչել իր իսկ զինվորներից, ապա նա միացել էր կարմիրների դեմ պայքարող Կորսակովի բանակին, այնուհետև հայտնվել խորհրդային ամենադաժան բանտերից մեկում: Բոլոր երեք իրադրություններից նա դուրս էր եկել հաղթանակած: Ճակատագրական այդ դեպքերը նրան մի բան էին հասկացրել՝ ինքն ունի կամքի հսկայական ուժ: Այժմ նա աշխարհի մի մոռացված անկյունում չորս հազարից ավել որբ ու անտեր երեխաների համար հարմարավետ քաղաք էր ստեղծել, բայց չէր հասկանում այդ ամենի իմաստը: Նա ուզում է գտնել իր և մյուսների հետ կատարված բոլոր դեպքերի պատճառը: Ցանկանում է հասկանալ, թե ինչպես ստացվեց, որ ինքն իր հոժար կամքով ընդունեց Լայռլի լուծը, գնալով ավելի ու ավելի մոլորվեց այդ լծի ազդեցության մեջ, կորցրեց իր ազատությունն ու անկախ ոգին և շղթայվեց մի բանի, որը չէր ընկալում: Մարկովը տառապում է, որովհետև չի գտնում այս հարցերի պատասխանը: Նրա տառապանքը շատ նման է Ս. Կիերկեգորի Աբրահամի ապրած մետաֆիզիկական զգացմունքին, այն տարբերությամբ, որ Աբրահամը հոգեզննում է իր հարաբերություններն Աստծու հետ: Գրոսբլուսի հերոսը արդեն հասել է կրոնական փուլին, բայց նա դա դեռ չի գիտակցում, և նրա հոգին կեղեքվում է, որովհետև իր առջև միայն դատարկություն է տեսնում:

Ոչ շատ հեռու փառաշուք խոյացած Արարատ լեռն ամեն օր Մարկովին «խոստանում» է բացահայտել տիեզերական առեղծվածները: Նրան թվում է՝ ինքը լեռան գագաթը նվաճելու երկու շարժառիթ ունի. դա դժվարությունն է, որ ուզում է հաղթահարել, որպեսզի ևս մեկ անգամ փառասիրաբար հաստատի իր կամքը, ապա տենչանքը՝ Արարատի գագաթից նայել աշխարհին: Միայն լեռան գագաթին նա պիտի ընկալի, որ ոչ թե ինքն է գնացել դեպի լեռը, այլ լեռն է նրան տարել դեպի իրեն: Տասն օր տևած ճամփորդության ընթացքում Մարկովին պաշարում են հակասական ներհայեցողական մտքեր. որքան մոտենում են գագաթին, այնքան նա զգում է, որ նվաճելու և իր կամքը հաստատելու ցանկությունը նահանջում է և, ի վերջո, վերանում՝ իր տեղը զիջելով անհաղթահարելի միայնության ու լքվածության սոսկալի զգացողությանը, բայց նա շարունակում է մազլցել, որովհետև վերջապես ընդունում է, որ, իր գիտակից կամքից բացի, «ինչ-որ մի ուրիշ ներքին ուժ, միևնույն ուժը, որը նրան դրդել էր Աստային ու Դինային վերցնել, նույնը, որն առանց պատճառի ստիպել էր նրան վերադառնալ Կարս, հիմա նրա քայլերը տանում էր դեպի գագաթնակետը: Դա նրա կամքը չէր: Նա այլևս չէր կամենում Արարատը նվաճել: Կարծես թե այն նույն հավերժական կամքը, որը Նոյին դրդել էր տապան կառուցել, տարել էր նրան ծովով ու դրել այս սարի վրա, տիրել էր Մարկովի կամքին ու ենթարկել իրեն: Եվ զգալով, որ ինքը հնազանդվում է այս կամքին, Մարկովը հանկարծ ըմբռնում է, որ Ամովս Լայռլը, Գրիգորի Ֆեոդորովիչը և նույնիսկ Քարիմ Աղան այս կամքով էին առաջնորդվում: Նա հասկանում է, որ միլիոնավոր այլ մարդիկ նույնպես առաջ էին մղվում ոչ թե իրենց սեփական կամքով, այլ ավելի հզոր և անդիմադրելի կամքով, քան մարդունն է, որը նրանք ոչ թե կամք, այլ հավատ էին անվանում» (376): Ռուս սպան Արարատի գագաթից նա-

յում է իր առջև փռված աշխարհի փառահեղ համայնապատկերին և զգում, որ իր ուղեղը դատարկվում է ամեն մի մտքից և զգացմունքից, կարծես թե այն կամքը, որը նրան հասցրել էր այդտեղ, նպատակ ուներ այդ վսեմ բարձունքում բացահայտել նրա անկարևորությունը և նրան զրկել անհատականությունից: Եվ երբ Մարկովն այս կերպ իր հոգին վերջապես մաքրում է և ընդունում աստվածային կամքը, նրա ուղեղը լուսավորվում է: Նա վերջապես հասկանում է, որ ինքը փրկվել է բոլոր սահմանային իրադրություններից գերագույն կամքի ցանկությանը, իսկ երբ փորձում է հասկանալ, թե ինչ նպատակով է ինքը փրկվել, տեսնում է Սիրանի դեմքը:

Այսպես, ահա, ամերիկացի գրողի նշանակալից վեպը այսօր էլ՝ իր ստեղծման 74-ամյա հեռավորությունից, նոր ուժով ու նոր հմայքով շարունակում է հուզել մարդկանց սրտերը, քանի որ համամարդկային է ու խորապես ազդեցիկ և ահազանգ-նախազգուշացում է գալիք սերունդներին՝ զերծ մնալու անուղղելի ոճիրներից:

Summary

Elgin Groseclose and his novel *Ararat*

Albert A. Makaryan
Svetlana R. Tumanyan

The present article is devoted to the novel *Ararat* by Elgin Groseclose, which was published just the week before World War II broke out, and which, as Warren French put it, "provides the best epitaph for the tarnished age of modern Imperialism". We have tried to reveal the peculiarities of the seemingly complicated plot, to analyze the author's intentions in the depictions of the Armenian Genocide and the Russian Revolution, to disclose the symbolic meanings of the biblical mountain and to expose the way to salvation that the author offers the humanity.